

438

ԲՐՈՒՄՆ Բ.

Կոնստանդանուպոլիսի ԲՆԶԿԱՐԱՆԳ.

61(023)

F-99

ԲԻՖՆԻԿ

1892

2010

2002



1023

Բ-99

№ 60

15388

ՐԱՌԻԼ ԲՐՕԸԷՐ

# ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԲՓՂԿԱՐԱՆ

ՍԿՁԲՆԱԿԱՆ ՕԴՆՈՒԹԻՒՆ ՄԻՆՉԵՒ ԲԺՇԿԻ ԴԱԼԸ

Թարգմ. ֆրանսերէնից

Բ. ՕՂԱՆԾԱՆ

— ❖ ❖ ❖ —

Ք Ի Յ Լ Ի Ս

ՅՊԱՐԱՆ «ԱՐՐ» Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

1892

225



Ընկերութեան հետեւեալ հրատարակութիւնները  
վաճառվում են Ընկերութեան գրասենեակում եւ  
Կենդրոնական գրախանաւ անոցում։—

	Ռ.	Կ.
1. Քառամազ մեղու, թարգմ. օր. Ն. Տէր-Մարկոսեան . . . . .	—	40
2. Կարմիր լապտեր, թարգմ. օր. Ն. Տէր-Մարկոսեան . . . . .	—	50
Նոյնը առանց կազմի. . . . .	—	30
3. Թովմաս կրօր տնակը, թարգմ. օր. Ն. Տէր-Մարկոսեան . . . . .	—	60
Նոյնը առանց կազմի . . . . .	—	45
4. Մանկական երգեր, համառ-Քաթիպա . . . . .	—	25
Նոյնը առանց կազմի . . . . .	—	15
5. Մարտի . . . . .	—	10
6. . . . .	—	10
7. . . . .	—	30
8. . . . .	—	0
9. . . . .	—	30
10. . . . .	—	20
11. . . . .	—	5
12. . . . .	—	5
13. . . . .	—	5
14. . . . .	—	0



610  
65-ԲԲ

61(023) ԿԲ  
Բ-99

Թիֆլիզի Ընկերութիւն Հայերէն գրքերի Հրատարակութեան

№ 60



ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ


## ՓՈՐՁԱՆԻՔՆԵՐԻ ԲԺՂԿԱՐԱՆ

1003  
10098

ՍԿՋԲՆՈՎԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՄԻՆՉԵՒ ԲԺՇԿԻ ԳԱԼՁ

Թարգմ. Ֆրանսերէսից

Բ. Օ Ջ Ա Ն Ե Ա Ն



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ «ԱՐՐ» Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

1892



Дозв. Ценз. Тифлисъ, 31 Августа 1892 г.

Тип. „Апоръ“ Т. Я. Назарьянъ, Вар. Ул.

ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Այս վերնագրի տակ ձեր աչքերի առաջ եմ դնում, սիրելի ընթերցողներ, հեշտ, գործնական և ամեն մտրդու համար հասկանալի այնպիսի միջոցներ, որոնցով կարելի լինի սկզբնական օգնութիւն հասցնել հիւանդին:

Ձեզանից որին չէ պատահել տեսնելու, թէ ինչպէս ձեր ներկայութեամբ մի մարդ յանկարծ հիւանդանում է. ձեր սիրտը մէթէ չի սեղմվել դառնութիւնից, տեսնելով որ անկարող էք օգնութիւն հասցնել հիւանդացածին: Անշուշտ դուք շտապում էք օգնել անբախտին և որքան կարելի է շուտով թեթևացնել նրա չարչարանքը: Բայց դրա համար թնչ պիտի անել:

Այս հարցի առաջ, որ ըստ երևոյթին մի զարհուրելի բան չի ներկայացնում, ես գրագ կը գամ, որ ձեզանից շատ-շատերը շփոթված կը մնան:

Եթէ կամենաք, ես կը նկարագրեմ մի տե-



սարան, որ դժբախտաբար շատ յաճախ է պատահում:

Գուք անցնում էք մի փողոցով. յանկարծ հարևան նորակառույց տնից մի անբախտ մշակ ընկնում է սայահատակի վրայ: Անկումն այնքան զարհուրելի է, որ մարդը ձեր առաջ ընկած է անշարժ դրութեան մէջ: Ի հարկէ դուք իսկոյն վազում, մօտենում էք նրան, և աշխատում բարձրացնել...: Բայց նա անշարժ է, սփրտնած և արնատ. նրա գլուխն ընկնում է ձեր թևերի վրայ:

Գուք կուգէիք նրան ուշքի բերել: Մի՞թէ նա մեռած է: Կարելի է, բայց այդ ինչպէս ստուգել. և պէտք է շուտով իմանալ, որովհետև նա միայն ուշաթափ է եղած: Եթէ կարողանայիք մի կերպով նրան կենդանացնել: Բայց, էլի հարցնում եմ, դրա համար թնջ պիտի անել: Ի՞նչ միջոցներ կը գործադրէք հիւանդին օգնելու համար:

Այն ժամանակ, դուք, որ բարի սիրտ ունեցող մի մարդ էք, դուք, որ տեսնում էք ձեր առջև ընկած մի արարած, որին պէտք է օգնել, ազատել, ընտանիք ունեցող մի հօր իր երեխաներին վերադարձնել, դուք, որ զգում էք ձեր սրտի մէջ ողորմածութիւն, ընկերսիրութիւն և անձնուիրութիւն, դուք

այդ րոպէին չէք կարողանում մի օգուտ տալ այդ թշուառին: Եւ դուք կորցնում էք ձեր գլուխը ու մնում սառած, անկարող, սրտներդ բարի դիտաւորութիւններով լցված, բայց մնում էք անգործ, որովհետև ոչ մի հասկացողութիւն չունէք տարրական բժշկութիւնից: Գուք յուսահատվում էք, և ձեր շփոթված ուղեղն ինքն ըստ ինքեան հարց է տալիս թէ թնջ պիտի անել:

Եւ միայն դուք չէք, որ անգործ էք մնացել: Ամբոխն էլ այդտեղ է. նա էլ ձեզ պէս անհանգիստ է և ուզում է բարութիւն անել: Բայց ոչ ոք այդ բազմութիւնից, որ կազմված է բարեսիրտ մարդկանցից, կարող չէ գործել ինչպէս հարկն է:

Այն ժամանակ սկսում են դռալ ու գոչել. «Մի բժիշկ ճարեցէք»:

Լաւ. բայց հարկաւոր է մէկին գտնել: Ո՞ւր գնալ: Եւ մինչև բժիշկ կը գտնեն, անբախտ վիրաւորվածն անշարժ ընկած է գետնի վրայ: Եւ այդ բժիշկը շուտով կը գայ:

Պէտք է իմանալ, որ շատ անգամ ամենաքիչ ժամանակում կարող է մարդուս կեանքը վերջանալ:

Սակայն եթէ դուք ունենայիք սկզբնական հասկացողութիւններ այդ անբախտին ուշքի



բերելու համար, դուք կը խլէիք մահվան ճիւղաններից մի գոհ, որ կարող էր հասարակութեան օգտակար լինել:

Հէնց այդ անձուկ ընկերներին է ձեր միտքը գալիս այն, ինչ որ երկար տարիներ ընթացքում սովորացրել են, և դուք դառնութեամբ ասում էք, որ ձեր սովորած բոլոր առարկաների մէջ չըկայ մէկը, որ օգտակար լինէր այդ ընկերին:

Արդ՝ պէտք է խոստովանվել, որ մեր կրթութիւնը գործնական կողմից շատ է կազու: Բայց ինչ է հարկաւոր սովորելու, որ կարողանայինք այսպիսի դէպքերում ծառայութիւն մատուցանել մեր նմաններին:

Դուք մի խորագէտ փիլիսոփայ էք, մի յայտնի գիտնական էք, հռչակաւոր մատիւտական էք, անուն ունեցող գրագէտ էք, կամ ճարտիկ վաճառական էք, փորձառու աշխատաւոր էք. ամենից առաջ դուք մի բարի մարդ էք և միշտ պատրաստ օգտակար լինել: Դուք իմանում էք յունարէն, լատիներէն, պատմութիւն, աշխարհագրութիւն, այլ և հազար բաներ, իսկ դուք չէք իմանում բնագիտութեան տարրական գիտութիւնները, որոնց հարկաւոր է դնել ուսումնարանների միւս առարկաների շարքում:

Այն ժամանակ ձեր գիտական ամբողջ

պաշարը ձեր աչքին շատ թեթեւ է երևում, և դուք յօժարութեամբ նրան կը փոխէիք այդ ընկերին այն գործնական գիտութեան հետ, որ այս հանգամանքում օգուտ կը տար:

Ես ենթադրեցի, որ փորձանքը պատահում է քաղաքում, այսինքն ուր կարելի է համեմատաբար աւելի շուտով օգնութիւն գտնել: Բայց եթէ այդ պատահում է գիւղում, հեռու որ և է օգնութիւնից, այն դէպքում հարկաւոր են շատ ժամեր մի քիչ թեթեւութիւն տալու համար. հարկաւոր է շատ երկար սպասել օգնութեան և յաճախ տեսնել սխալներ, նախապաշարմունքներ և կամ վնասակար բժշկութիւն...: Այստեղ տարրական բժշկութեան գիտնալն աւելի կարևոր է, որովհետև եթէ բազմամարդ քաղաքների դժբախտութիւններն անպակաս են, գիւղերն էլ նմանապէս ենթակայ են յաճախակի փորձանքների:

Կաթուած, մկանաձգութիւն, որսորդական արկածներ, թունաւոր խալթումներ, սուկորի բեկումն (կոտրելը), ջրի մէջ խեղդուել. ահա փորձանքներ, որոնք կարող են յաճախ պատահել և որոնց իսկույն և եթէ պէտք է ճար անել: Արդ՝ ինչ է հարկաւոր, ո՞վ է իմանում—բժիշկը...: Նա հեռու է: Ո՞վ



կարող է օգնել: Ոչ ոք: Եւ իրաւ, մեթէ մեր կրթութեան գործում մի մեծ պակասութիւն չը կայ:

Ես շոշափեցի մի մեծ հարց՝ կրթութիւն: Իմ ցանկութիւնը չէ այստեղ խօսել այդ ընդարձակ գիտութեան մասին, թէպէտ նա այժմ օրվայ հարց է: Ինչ չէ պատկանում ասել, թէ կրթութիւնը թիւս պիտի անի. դա ուրիշ հեղինակաւոր մարդկանց գործն է: Բայց ես իրաւունք ունիմ պահանջելու, որ նա ամենից առաջ լինի գործնական: Եւ որպէս զի ես իմ շրջանից դուրս չը գամ, ես կուզենայի, որ նա գործնական լինէր վերոյիշեալ տեսակեօից, այսինքն սովորացնէին ամեն մէկին, աղքատին, և հարստին, քաղաքացուն և գիւղացուն, այն ամենն, ինչ որ հարկաւոր է և կարելի է անել, եթէ գործ ունէք մէկի հետ, ու յանկարծ ձեր աչքի առաջ հիւանդանում է:

Այս փոքրիկ գրվածքի մէջ ես կաշխատեմ սովորեցնելու, թէ թիւս պէտք է անել, երբ մարդուս սիրտը, քաղաքացու պարտաճանաչութիւնը թելագրում են թեթեւացնել մերձաւորիդ չարչարանքը: Ես ուզում եմ, որ մայրերն իմանային և կարողանային ազատել իրենց սիրելի երեխաներին, ունենալով մի քիչ

պաղարիւնութիւն: Ես չեմ ասում, որ այս գրքոյկի մէջ գրածն իմանալով, կարելի է առանց բժշկի օգնութեան ազատել հիւանդին. ս'չ. բժիշկն իր տեղն ունի, միայն մինչև բժշկի գալը սրանով կարող էք հասցնել սկզբնական օգնութիւնը, որ մեծ կարևորութիւն ունի: Մարդուս մեքենան այնքան նուրբ և բարդ անիւներ ունի, որ քիչ բան է հարկաւոր նրան փշրելու կամ իր կանոնաւոր ընթացքը վերականգնեցնելու համար: Գլխաւորն է՝ գործել և որքան կարելի է շուտով և գիտակցաբար գործել:

Սրա մէջ ես կաշխատեմ նոյնպէս զգուշացնել հասարակութեան այն տարածված և յաճախ օրհասական սխալներից, որ մարդիկ անում են, ի հարկ է միայն բարի նպատակով: Ես կաշխատեմ ապացուցանել մի քանի ծիծաղաշարժ նախապաշարմունքների վնասակարութիւնը և դէմ դնել յայտնի շարլատաններին. որոնք օգուտ են քաղում ժողովրդի տգիտութիւնից՝ նրան խաբելու համար:

Ես բաժանել եմ այս աշխատանքը երկու մեծ մասերի. 1 ներքին պատմասունից գոյացած փորձանքներ: Այս տեսակ հիւանդութիւններն առաջանում են առանց արտաքին պատճառների:



Այս մասի մէջ ես դրել եմ՝ կաթուածը, արնի համախոռոնութիւնը, մկանաձգութիւնը և արիւնահոսութիւնը: 2. արտաքին պատճառներից գոյացած փորձանքներ: Ձանագան տեսակ վերքեր, այրվածներ, կոտորումն, ճըմլումն, խախտումն, թունաւոր խալթվածքներ, թունաւորումն, և այլն:

Սրանք բոլորն առաջ են գալիս արտաքին պատճառներից մեր մարմնի մէջ, երբ վերջինս մինչև անգամ կանոնաւոր գործողութեան մէջ է գանվում:



Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս.

ՆԵՐՔԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻՑ ԳՈՅԱՅԱԾ ՓՈՐՁԱՆՔՆԵՐ

Գ Լ Ո Ի Խ Ա.

Արնի համախոռոնութեան մասին.

Ի՞նչ է արնի համախոռոնութիւնը:—Հարկաւ դուք իմանում էք, սիրելի ընթերցող, թէ այս ինչ է նշանակում, և ես կարեւորութիւն չեմ զգում այստեղ երկարօրէն սրոշել մի բան, որ շատ անգամ տեսած կը լինէք:

Այն դուրեկան կարմրութիւնը, որ երևում է ամօթխած աղջկայ թշերի վրայ... արնի համախոռոնութիւն է:

Ի՞նչ է լինելով ուղիղ և վեհանձն մարդ, զգում էք թէ ինչպէս ձեր երեսը տաքանում է անարժան պարսաւանքից, արդար բարկութիւնից կամ խռովութիւնից... այդ տաքութիւնն՝ արնի համախոռոնութիւն է:



Այն գեղեցիկ կարմրութիւնը, որ դուք նկատում էք ճոխ ճաշից յետոյ ձեր հիւրի ուրախ գէմքի վրայ... դարձեալ արնի համախոռնութիւն է:

Ես կարող եմ շատ օրինակներ բերել, բայց կարծեմ սրանք էլ բաւական են:

Ինչպէս տեսնում էք, համախոռնութիւնը (congestion) յաճախ է պատահում, և բարեբախտաբար միշտ վտանգաւոր չէ: Նա վտանգաւոր է դառնում յայտնի զէպքերում, երբ թունդ է և երկարատև: Այն ժամանակ պէտքէ օգնութիւն հասցնել:

Համախոռնութիւնը կախված է արիւնաշրջութիւնից, այսինքն յայտնի զէպքերում մարմնի մի որ և է մասի անօթները չափից դուրս լցվում են արնով:

Ձանազան տեսակ համախոռնութիւններ կան, որոնցից ես կը խօսեմ միայն ուղեղի համախոռնութեան մասին, որ յաճախ է պատահում և ամենից վտանգաւորն է, որի համար և պահանջում է շուտափոյթ և խելացի օգնութիւն: Մարմնի ոչ մի այլ մասում արնի համախոռնութիւնն այնքան վտանգաւոր չէ, որքան ուղեղի մէջ. մահը գալիս է մինչև անգամ, երբ հիւանդութիւնը ծանր կերպարանք չէ ստացել, այսինքն ուղեղի մէջ արիւ-

նահոսութիւն լինելուց առաջ: Վերջինիս մասին կը խօսեմ «կաթուածի» մէջ:

Արիւնաշրջութեան մասին:—Նախ՝ անհրաժեշտ եմ համարում ձեզ բացատրել կարճաժամ կերպով արիւնաշրջութեան մեխանիզմն և թէ ինչպէս այս վերջինս իր հաւասարակշռութիւնը կորցնելով, առաջացնում է ծանրակշիռ շփոթութիւններ ուղեղային գործունեութեան մէջ: Այլալութիւնը մինչ այն աստիճան կարող է փոխել օրգան իզմի կանոնաւոր ընթացքը, որ կարող է մահ պատճառել:

Արիւնաշրջութեան կենդրոնը, ինչպէս յայտնի է, սիրտն է, որ միևնոյն ժամանակ գործող և շարժող ոյժ է, որից ամեն-ինչ կախումն ունի:

Սրտից դուրս են գալիս շնչերակ կոչված անօթները, որոնք բաժանվելով բազմաթիւ ճիւղերի, բարականում են, ինչպէս ծառի ճիւղերը, և վերջանում են ամենանուրբ խողովակներով, որոնց անվանում են աւշային անօթներ: Այս միևնոյն աւշային անօթները ծնունդ են տալիս սկզբում դեռ շատ փոքրիկ երակների, որոնք միմեանց հետ միանալով, հաստանում են, և այդպիսով կազմում հաստիկ ըուններ. սրանք ես են բերում զէպի սիրտն այն արիւնը, որին շնչերակները տարել



էին դէպի մարմնի զանազան կողմերը:

Անօթների մէջ պարունակվող արնի քանակութիւնն ընդմիջտ պէտք է միևնոյնը մնայնա չի կարող փոփոխվել՝ շատանալ կամ քըչանալ, առանց մարմնի հաւասարութիւնը խանգարելու:

Ի՞նչ դեր ունի սիրտն օրգանիզմի մէջ: Մի հասարակ համեմատութիւն է հարկաւոր բացատրութեան համար: Սիրտը նման է ջրհանի \*) նա հրում է դէպի շնչերակները հարկաւոր արիւնը՝ կենդանացնելու համար մարմնի բոլոր մասնիկները: Առողջ դրութեան մէջ, սրտի ուղարկած ամեն մի արեան կոյտի փոխարէն, երակները դէպի սիրտն են բերում նոյն քանակութեամբ արիւն, որին թոքերը մաքրում են, պիտանի դարձնելու համար: Այստեղ՝ ես ձեզ չեմ կարող բացատրել, թէ ինչպէս արիւնը մաքրվում է թոքերի մէջ. մի այլ տեղ ես այդ կը նկարագրեմ:

Ուղեղի համախոնութեան պատճառները:— Ենթադրենք որ մարմնի մի որ և է մասում, օրինակ, ուղեղի մէջ մի ինչ որ բան արգելում է արեանը՝ ետ դառնալու դէպի սիրտը: Ի՞նչ կը լինի դրա հետևանքը: Արիւնն անընդհատ գալով դէպի ուղեղը, ամենափոք-

\*] նասու:

րիկ անօթներն իսկոյն և եթ սկսում են լայնանալ և տուգել:

Արդ՝ ուղեղը փակված է մի ոսկոռէ արկղի մէջ, որին զանգ են անուանում. այս ոչառաձգական արկղն անկարող է լայնանալ: Ուրեմն ո՞վ պիտի տուժէ անօթների այսպիսի լայնանալուց: Ի հարկէ, ուղեղը, բայց սրահետ ևս բոլոր օրգանները, որովհետև ուղեղն է, որ նախագահում է ամեն մի գործողութեան, ամեն մի շարժմունքի, ամեն մի մտքի:

Որ՞ոնք են ուղեղի համախոնութեան պատճառները:— Յաճախ արեգակի չափազանց ջերմութիւնը կամ մի փակված տեղի տաքութիւնը. երբեմն մարսողութեան գործողութիւնը և շատ անգամ խիստ յուզմունքը, բարկութիւնը, հարվածը, վայր ընկնելը, արբեցողութիւնը կամ թէ ուղեղի չափազանց լարումն...

Այստեղ ես առաջ եմ բերում այն պատճառները, որոնք կարող են պատահել առողջ մարդուն, և մի կողմն եմ թողում այն դէպքերը, երբ մարդս արդէն հիւանդ է:

Արնի համախոնութեան սկզբում, մարդուս աչքերը յանկարծակի մթնում են. նա օրօրվում է, երբեմն հաւասարակշռութիւնը կորցնում, եթէ համախոնութիւնը խիստ է, նա ուշաթափվում է ու ընկնում:



Եթէ համախառնութիւնը թույլ է, այսինքն հիւանդը չէ ուշաթափվում, նա վտանգաւոր չէ: Ենթադրենք ամենավատ տեսակը: — Հիւանդի երեսը սկզբում սփռտնում է, բայց իսկոյն և եթկարմրում է և քիչ ուռչում: Հիւանդն աշխատում է ներս շնչել մեծ քանակութեամբ օդ, որ կարծես, բաւականութիւն չէ տալիս նրան:

Այդ ժամանակն է, որ դուք աշխատում էք նրան օգնել: Շտապեցէք, որովհետև կարող է պատահել, որ մի քանի րոպէից լետոյ արդէն ուշ լինի:

Ուրեմն թնչ պէտքէ անել:

Հէնց այժմ պիտի մտաբերել, թէ թնչ է կատարվում գանգի մէջ:

Սկզբնական օգնութիւնը: Գանգի մէջ ուղեղը ճնշված է արնով լի անօթներից, որոնք առայժմ անկարող են իրանցից աւելորդ արիւնը հեռացնել: Արդ՝ նրանց պէտք է օգնել այդ գործում:

Իրա համար, նախ պառկեցրէք հիւանդին, զլուխը բաց և բարձր դրած: Հեռացրէք նրանից ինչ որ կարող է ճնշել նրա կուրծքը, առաւել ևս վիզը: Շուտով բերէք ջուր, կամ թարմ ցեխ, մի խօսքով ամեն բան, միայն թէ սառը լինի: Իրէք այդ ճակատի և ամբողջ

զլխի վրայ և ստեպ ստեպ փոխեցէք: Եթէ օգնողները բազմաթիւ են, խուսափեցէք նրան շրջապատելուց, թէ չէ դուք թարմ օդի առաջը կը փակէք: Հիւանդին տեղաւորեցէք, որքան կարելի է, ազատ օդի մէջ: Ահա այս հանգամանքներն են անհրաժեշտ:

Յրտի ազդեցութեան տակ անօթները կուչ են գալիս և արիւնը քշում իրանցից: Այդպիսով՝ նրանց մի առ ժամանակ թուլացած կենդանութիւնը վերականգնում է: Այժմ այդ աւելորդ արիւնը հարկաւոր է տանել դէպի մարմնի մի ուրիշ մասը:

Ձեր շորի թևքով կամ մի ուրիշ կոշտ շորով ուժեղ կերպով շփեցէք հիւանդի ոտերը: Շփեցէք որքան կարելի է խիստ. մի վախէք նրա կաշու կարմրանալուց, հէնց այդ է հարկաւոր: Աշխատեցէք գտնել մի քիչ քացախ և դրանով շփեցէք հիւանդի կաշին, որ իր մէջ փոքր ինչ արիւն ընդունելով ուղեղը կազատէ աւելորդ արնից: Հէնց որ հիւանդը կարողացաւ կանգնել, աշխատեցէք մի քանի քայլ անել տալ նրան: Կրկնում եմ՝

Եթէ դուք տեսնում էք, որ մէկն ուշաթափ է եղել և երեսը սփրտնած է ու շնչա-

1003  
10093





առութիւնը խանգարված, իմացէք որ արնի  
համախոռնութիւն է պատահել նրա հետ:

Պառկեցրէք հիւանդին աղատ օգուժ, գլու-  
խը բաց և բարձր դրած: Քակեցէք նրա հա-  
գուստը:

Գլուխը շարունակ թրջեցէք սառը ջրով:  
Ուժեղ կերպով շփեցէք նրաներքին մասերը:  
Թողէք մի քանի քայլ անի, հէնց որ մի  
փոքր կը կազդուրվի:

Եւ միւսնոյն ժամանակ ձեզանից մէկը թո-  
ղէք շուտով բժշկի ետևից գնայ: Ես ասում եմ  
և կրկնում, որ բժշկի միջամտութիւնը կարևոր  
է և աւելի լաւ, որովհետև յաճախ բժիշկը դա-  
լով ոչ թէ մի մահ կը ստուգէ, այլ մի հի-  
ւանդ, որին պէտք է դարմանել:

ԳԼՈՒԽ Բ.

Կ Ա Թ Ո Ւ Ա Ծ Ի Մ Ա Ս Ի Ն

Կաթուածի եւ համախոռնութեան մէջ ն-  
ղած զանազանութիւնը:—Արնի համախոռնու-  
թեան մասին խօսելուց յետոյ, հերթը բնա-  
կանաբար գալիս է կաթուածին, որովհետև մի  
կողմը թողնելով տեսական գիտութեան որո-  
շումները, կաթուածն ոչ այլ ինչ է, եթէ ոչ  
համախոռնութեան ամենաբարձր աստիճանը,  
նրա վախճանը: Եւ իրաւ, կաթուածից առաջ  
միշտ լինում է խիստ կամ թույլ համախոռ-  
նութիւն:

Արդ՝ գլուխ Ա.-ի մէջ լիշտ շատ բաներ,  
չարմարվում են այտեղ առաջ բերած առար-  
կային: Այդ պարզ ապացուցանելու համար, ինչ  
հարկաւոր է ձեզ ցոյց տալ այս երկու հիւան-  
դութիւնների մէջ եղած զանազանութիւնը:

Համախոռնութեան ժամանակ, ձեզ յայտնի է,  
որ անօթները արնով ծանրաբեռնված լինելով  
լայնանում են և ճնշում գործ դնում ուղեղի վրայ:  
Բայց այս անօթներն անվնաս են մնում, սրան-  
ցից ոչ մէկը պատուված չէ և խանգարված կար-



գապահուածիւնը վերականգնեցնելու համար, մեզ հարկաւոր է անօթներին վերագարչնել իրանց կարկամութիւնը, այսինքն կուչ գալու ընդունակութիւնը:

Իսկ կաթուածի ժամանակ անօթներն այն աստիճան արնով լցված են լինում, որ ճնշման չը դիմանալով՝ պատուվում են: Արիւնը դուրս վազելով ճնշում է գործ դնում ուղեղի վրայ: Ուղեղը հէնց բնութեամբ քիչ համբերող է, և յաճախ մի կաթ արիւնը բաւական է նրա մէջ անկարգութիւններ առաջ բերելու համար:

Հաւասարակշռութիւնը վերականգնեցնելու համար, բաւական չէ միայն արնի մի մասը տեղափոխել ուղեղից դէպի մարմնի ուրիշ մասերը, ինչպէս համախոռոնութեան ժամանակ: Պէտք է օգտվել ոստայնների մի ուրիշ յատկութիւնից: Այդ յատկութիւնը՝ ծծելու կարողութիւնն է, այսինքն օրգանական ոստայններն ընդունակ են իրանց վրայ թափված հեղուկները ծծել: Այս աշխատանքը շատ դժուարին և երկարատե է, որի համար և հիւանդութեան վտանգը մեծ է:

Գժբախտաբար ձեր տուած օգնութիւնն այնքան էլ մեծ չէ կարող լինել. բայց էլի, մարդուս պարտականութիւնն է իր ուժերի չափ օգնել:

Կաթուածի նշանները:— Կաթուածի տրամադիր անձնաւորութիւններն առհասարակ լինում են արնային, կարմիր, ուժեղ և կարճ պարանոց ունեցող մարդիկ: Նրանց երեսը զուարթ է, աչքերը դուրս ընկած և արնալի: Բայց մարդս կարող է կաթուած ստանալ, առանց վերոյիշեալ յատկութիւններն ունենալու, առաւել ևս ծեր հասակում: Նւ իրաւ, յաճախ պատահում են վտիտ, սփրտնած անձնաւորութիւններ, որոնք հիւանդ են լինում կաթուածով: Այս դէպքում մարդս անձնական տրամադրութիւն ունի դէպի այդ հիւանդութիւնը և նրա արնային անօթները ենթարկված են լինում մի տեսակ փոփոխութեան, այսինքն կորցրած են ունենում իրանց առաձգական յատկութիւնը և հեշտութեամբ ճաքվում են զանազան սլատճառներից:

Գեր թէ վտիտ, սփրտնած թէ զուարթերեո կաթուածահար անձնաւորութիւնը, ինչպէս և համախոռոնութեան դէպքում, շանթահարի պէս յանկարծակի է ընկնում:

Շատ անգամ հիւանդը զգում է, ինչպէս իր ուղեղի մէջ մի բան պատուվեց:

Կաթուածահար մարդն իսկոյն օրօրվում է ու գետին ընկնում, և համարեա միշտ անդամալոյծ է դառնում, կամ ամբողջ մարմնով,



կամ մարմնի մի մասով: Բերանը ծռվում է մի կողմը և շնչառութիւնը դժուարութեամբ է կատարւում: Միւսնոյն կողմի աչքն ամբողջապէս չէ փակւում. եթէ այս աչքի արտւանունքները բարձրացնէք, կը տեսնէք որ սրա բերըն աւելի լայն է, քան միւս աչքինը: Միւսնոյն կողմի թւեր, ոտը անշարժ են և յաճախ անզգայ:

*Սկզբնական օգնութիւնը:*— Այս դէպքում, սիրելի ընթերցողներ, լաւ հասկանում եմ, որ մի քիչ զլուխներդ կը կորցնէք, որովհետև վտանգը մեծ է: Չընայած դրան, անգործ չը պիտի մնաք. սաստիկ հիւանդացածներից շատերն ուշքի են գալիս, և դուք կարող էք յուսով ազատելու ձեր հիւանդին:

Կատարեցէք այն ամենն, ինչ որ ասել եմ արնի համախոռոնութեան դէպքում: Սառը ջուր գլխի վրայ, բաց և մաքուր օդ, ուժեղ կերպով շփել սրունգները, նաև սրտի կողմը, եթէ հիւանդը սփրտնած է: Փոքրիկ բաժակով շնչահան (արնի սրուակ, պոզ) դրէք սրունգների կամ մէջքի վրայ այս կերպով. բաժակի մէջ ձգէք մի կտոր վառված թուղթ, և երբ այդ թուղթը համարեա թէ այրված կըլինի յանկարծակի շուռ տուէք բաժակը և բերանը դրէք կաշու վրայ: Իսկոյն դուք կը տեսնէք, թէ ինչպէս

կաշին կարմրում և ուռչում է բաժակի տակ: Կատարեցէք մի քանի անգամ այս փոքրիկ գործողութիւնը մարմնի զանազան մասերի վրայ:

Եթէ եռ եկած ջուր կայ ձեզ մօտ, ձգէք նրա մէջ մի մուրճ, և երբ երկաթը խիստ կը տաքանայ, դրէք այն սրունքների և մէջքի վրայ. այդպիսով կաշին թեթև կայրէք, որ շատ օգտակար է: Ուժեղ կապեցէք թաշկինակով կամ գօտիով թւերի վերևի մասը. այդպիսով դուք կը կանգնեցնէք թւերի արիւնը, որ այլևս չի կարող գնալ դէպի սիրտը:

Փնտռեցէք հիւանդի պարանոցի վրայ քրնաբեր շնչերակները, որոնք գտնվում են շնչափողի երկու կողմերը և թեթև կերպով հուպ տուէք առաւել ևս այն շնչերակը, որ գտնվում է անդամալոյժ եղած մասի հակառակ կողմը: Ասում եմ հակառակ կողմը, որովհետև շնորհիւ անատօմիական մի յատուկ կազմութեան, ուղեղի վնասված մասը գտնվում է միշտ անդամալոյժ մասի հակառակ կողմը: Եթէ, օրինակ, մարմնի աջ կէսն է անդամալոյժ, կը նըշանակէ ուղեղի ձախ կողմն է վնասված.



այս դէպքում ձախ քնաբեր շնչերակը պիտի հուսկ տայ:»

Ինչքան նկատած կը լինէք, որ շատ դէպքերում ես խորհուրդ եմ տալիս ցուրտ ջրի գործածութիւնը: Առհասարակ այդ հեղուկը հեշտութեամբ է ձեռք բերվում: Բայց միակ պատճառը այս չէ, որ ես առաջարկում եմ ձեզ նրա գործածութիւնը: Ջրի զովացուցիչ և հուսկ տուող յատկութիւնները մեծ ծառայութիւն են մատուցանում շատ դիպուածներում:

Մի կարևոր նկատողութիւն ևս:

Միշտ՝ երբ ջուրը գործադրում էք իբր գովարար հեղուկ, աշխատեցէք յանկարծ չը դադարեցնել նրա գործածութիւնը, երբ հիւանդն իրան լաւ է զգում. թէ չէ արնի անօթները կարող են էլի առաջվայ պէս լայնանալ:

Ես վերև ասացի, այժմս էլ կրկնում եմ, որ ձեր արածը մի մեծ բան չէ. բայց այդ քիչ օգնութեամբ էլ կարող էք հիւանդին ազատել մեռնելուց, մինչև լուրջ օգնութեան գալը:

Գ Լ Ո Ւ Խ Գ.

*ՄԿԱՆԱԶԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ*

Համախոնութեան մասին խօսելիս, ես առիթ ունեցայ մի քանի խօսք ասելու և արիւնաշրջութեան մասին: Իսկ սոյն նիւթը լաւ հասկացնելու համար, ես հարկաւոր եմ համարում կարճառօտ կերպով բացատրել ուղեղային սիստեմի գործողութիւնը: Անկասկած իմ բացատրութիւնը շատ համառօտ կը լինի: Բայց էլի անհրաժեշտ է, որովհետև ես չը պիտի մոռանամ, որ ես գրում եմ ոչ թէ նրանց համար, որոնք արդէն հասկացողութիւն ունին գիտութեան մասին և որոնք հարկաւորութիւն չունին իմ բացատրութիւնները լսելու. այլ այն մարդկանց համար, որոնք այս հարցի մասին ոչ մի գաղափար չունենալով, չեն կարող ըմբռնել գիտական բացատրութիւնները:

*Մկանսածոցութեան նշանները:*— Մկանսածոցութիւնը շարժման գործունէութիւնների խանգարումն է, որ յայտնվում է, կամ այդ շարժման չափազանցութիւններով (ցնցիւնով, ընդոստումով, ջղային և անկանոն շարժումներով), կամ չափազանց ձգտումով, որ յայտ-



նի է կծկումն անուսով: Այս երկու գործողութիւնները, որոնք ըստ երևույթին հակառակ են երևում, ծագումն են առնում միևնոյն պատճառից և իսկապէս միատեսակ են առաջ գալիս:

Ի՞նչն է մեր անդամների, մեր ամբողջ մարմնի շարժողը: Մկաններն են, այդ մսային կարմիր խուրձերը, որոնք ոսկորներին կպած են, և որոնք կարկամելով (կուչ գալով), զանազան թմբեր են կազմում կաշու տակ:

Արդ՝ մկանը շարժման գլխաւոր գործակալն է: Բայց որնա կարողանայ կարկամել, (կուչ գալ) պէտք է մի որ և է բան նրան ոյժ և զօրութիւն տալ գործելու: Այստեղ է միջամտում ուղեղային սիստեմի գործունէութիւնը:

Ջղերը կամ նեարդները զանազան հաստութեամբ թելեր են, որոնք ցրվում են մեր մարմնի ամեն մասնիկներում՝ նրանց զգայունութիւն տալու համար: Սրանց կարելի է համեմատել հեռագրական թելերի հետ: Այժմ հարկաւոր է ասել թէ ուր է գտնվում էլէքտրական շարքը, որ հոսանքից է գոյանում, ուր է այն կարգադրիչը, որ կառավարում է այդ հոսանքը և նրան հրամայում է անել այն, ինչ որ հարկաւոր է:

Արդ՝ էլէքտրական շարքը մէջքի ուղեղն

է, որից դուրս են գալիս ջղային թելերը, իսկ կարգադրիչը՝ գլխի ուղեղն է: Մէջքի և գլխի ուղեղները կոչվում են ուղեղային կենտրոններ: Առողջ գրութեան մէջ սրանք բոլորն էլ հաւասարակշիռ են, ամեն մէկը գործում է իր շըրջանի մէջ և իր յատուկ սահմանից դուրս չի գալիս: Բայց ենթադրենք այժմ, որ մի որ և է բան չափազանց զրգուում է մէջքի կամ գլխի ուղեղը: Այս դէպքում հաւասարակշիռութիւնը խանգարվում է: Ելէքտրական հոսանքը թունդ է, ուղեղն այլևս անկարող է նրան կանոնաւորել: Ջղերը շարունակում են տանել այդ զօրեղ հոսանքը դէպի մկանները, որոնք ստիպված են չափից դուրս կարկամել: Այստեղից են գոյանում ցնցումները, ընդոստումները և երբ այդ ցնցումները շատ մօտիկ են լինում, և իրար հետ խառնվում առաջ է գալիս մի երկարատև կարկամումն, որին վերև ես անուանեցի կծկումն:

Դուք իմանում էք, որ մեր խեղճ էլէքտրական մեքենայի փչանալը բազմաթիւ աստիճաններ ունի: Սկսած ցնցումից, ընդոստումից մինչև ընդհանուր կարկամութիւնը՝ շատ աստիճաններ կան: Նեարդների կծկումն, գլխի ստոյտը, լուսնոտութիւնը, և այլն գլխաւոր տեսակներն են:

Այս բոլորից ես ընտրել եմ միայն երկուսը



որոնց հետ պէտք է ծանօթանալ որովհետեւ,  
աւնդ, նրանք ամենից յաճախ են պատահում:

*Մկանսաձգութեան պատճառները:* — Այս  
հիւանդութեան տրամադիր մարդկանց համար  
բաւական է մի յուզմունք կամ բարկութիւն,  
վախ, կամ մի զարհուրելի տեսարան որ իսկոյն  
մկանաձգութիւն ստանան: Մկանաձգութիւնը  
յանկարծէ սկսվում, և մարմնի մի մասը կրծ-  
կվում է: Հիւանդն ուշաթափ է լինում, ընկնում  
է և նրա մարմինն անընդհատ շարժողութեան  
մէջ է գտնվում: Նրա երեսը սփրտնած է,  
զծագրութիւնն ալլալած և աչքերը շուռ ե-  
կած: Հիւանդը փոփոխակի կարմրում է կամ  
սփրտնում, և մի և նոյն ժամանակ տաքա-  
նում է կամ սառում: Նրա շնչառութիւնն  
անկանոն է և յաճախ կանգ է առնում: Զգու-  
շացէք այս վերջին նշանից. սա ամենավտան-  
գաւորն է, և չը պէտք է թողնել, որ երկար  
տևի, որովհետև հիւանդը կարող է խեղդվել:

Ահա մկանաձգութեան պատկերը, ընթեր-  
ցողներ: Զեզանից ով որ այս տեսել է, լաւ իմա-  
նում է, որ այստեղ դուրեկան ոչինչ չը կայ:

*Սկզբնական օգնութիւնը:* — Ամենից ա-  
ռաջ հիւանդին բռնեցէք, որ նա իր ան-  
կանոն շարժմունքներով իրան չը խփէ շըր-  
ջապատող առարկաներին: Այստեղ մի զգու-

շուրթիւն. նրան բռնեցէք, պահեցէք, բայց  
առանց բռնութիւն գործ դնելու, որով-  
հետև պէտք է իմանալ, որ գործադրած  
մեծ ոյժը մի նոր պատճառ է դառնում  
ուղեղի գրգռման, որ աւելի ևս կը չափա-  
զանցացնէ մկանաձգութեան աստիճանը:

«Ուշադրութիւն դարձրէք, որ նրա բերանը,  
քթածակերը բաց լինին՝ ազատ շունչ քա-  
շելու համար»:

«Նրա գլխի և երեսի վրայ շարունակ դրէք  
սառ ջրի մէջ թրջած թաշկինակներ. բայց  
այս գործողութիւնը յանկարծ չը դադար-  
եցնէք, ինչպէս վերև ասացի»:

«Եթէ ձեր ձեռքի տակ եթեր\*) կայ, թողէք  
հիւանդը ներս շնչէ նրա շոգին»:

«Այս բոլորն արէք, մինչև որ հիւանդը կը  
շարժվի. իսկ երբ շարվեց ստիպեցէք նրան  
մի քանի քայլ անելու»:

«Բայց եթէ հիւանդը սառում է և մնում ան-  
շարժ, և եթէ նրա շնչառութիւնը կամաց-  
կամաց թուլանում է, այդ դէպքում պէտք է  
նրան տաքացնել խիստ կերպով շփելով  
նրա կաշին: Գործադրեցէք վերև ցոյց  
տուած բոլոր միջոցները. կրամըթեցէք, ծա-  
կեցէք քորոցով, կրծքի կաշին այրեցէք վառ-

\*) Եթեր:



ած թղթի կտորով, որ շնչառութեան շար-  
 Ժողութիւնը սկսվի: Յոյսներդ մի կըտ-  
 րէք և երկար շարունակեցէք. համարեա  
 միշտ աջողութիւն կունենաք: Քանի քանի  
 անգամ տեսնված է, որ ուշքի է գալիս այնպի-  
 սի հիւանդ, որից բոլորովին ձեռք էին վերց-  
 րել: Նախ երևում է շնչառութեան մի  
 թոյլ շարժմունք, ապա երկրորդը, եր-  
 րորդը... և ամեն ինչ կամաց-կամաց կարգ  
 ու կանոնի է գալիս:»

*Երեխաների մ'կանաձգութեան մասին:—*  
 Սրա մասին կարելի է ասել այն, ինչ որ բա-  
 ցատրել եմ վերև. զանազանութիւնը միայն  
 պատճառների և նշանների մէջն է:

Երեխաների մկանաձգութեան գլխաւոր  
 պատճառը ատամների դուրս գալն է: Երե-  
 խայի ատամների դուրս գալու ժամանակ ա-  
 րիւնը յորգառատ վազում է դէպի մէջքի ու  
 գլխի ուղեղները և այդպիսով, ինչպէս վերև  
 ասացի, զրգուում է ջղային կենտրոնները: Այդ  
 զրգուումն տարածվում է ամենուրէք՝ դէպի  
 մկանները և մկանաձգութիւն պատճառում:

Բացի սրանից կան և ուրիշ պատճառներ,  
 ծաղիկը, կարմրուկը, սկարլատինը սկսվում են  
 մկանաձգութիւնով, և յաճախ էլ աղիքների ճի-  
 ճուներն են լինում դրա պատճառը:

Ահա այս հիւանդութեան նշանները:

Երեխան վատ դրութեան մէջ է. նրա քունն  
 անհանգիստ է, զարթնում է ընդոստումներով:  
 Թւերը և մատերը սկսում են կծկվիլ: Կնճառ  
 երեսը կամ սփրտնում է կամ կապտում: Ծնօտն  
 անընդհատ շարժողութեան մէջ է: Մէկ մէկ  
 երեխան սեղմում է ծնօտները և եթէ ատամ-  
 ները դուրս են եկած, կրճտացնում է նրան-  
 ցով: Նրա աչքերը շուռ եկած են, հայեացքն  
 երբեմն անշարժ. երբեմն դարձնում է այս  
 ու այն կողմն, բայց յաճախ դէպի վերև:

Գլուխը միշտ ետևն է ընկած. պարանոցն  
 ուռած է. քնաբեր շնչերակներն ուժեղ զար-  
 կում են: Իրանը ձիգ է և կամարաձև: Ծնչա-  
 ութիւնն աղմկալի է, դժուար և յաճախ ընդ-  
 միջվում է հառաչանքներով և սուր լացով: Ընդ-  
 հանուր զգայնութիւնը թուլացած է: Վերջ-  
 նանգամները (ոտերը, ձեռքերը) սկսում են սառել:

*Սկզբնական օգնութիւնը:—* Շուտով մեր-  
 կացրէք երեխային և տաքանկողնի մէջ դրէք:  
 Տաքացրած շորերի, երկաթի, տղիւսի օգ-  
 նութեամբ տաքացրէք նրա վերջնանդամ-  
 ները, ամբողջ մարմինը, բացի գլխից, որը  
 պիտի դնել բարձր ու պինդ բարձի վրայ  
 և անընդհատ զովացնել սառ ջրով: Սենեակի  
 պատուհանները բաց արէք, որ միշտ թարմ



օգ մտնի: Հեռացրէք նրան ազմուկից,  
որ կարող է նրան գրգռել: Հիւանդի ներ-  
կայութեամբ կամ հետը մի խօսէք:

«Երեխայի մարմինն ընկղմեցրէք գաղջ  
(ոչ տաք ոչ սառը) ջրի մէջ, աշխատելով  
գլուխը սառ պահել:

«Եթէ երեխան նոր է կերակրվել, նա կը  
սկսի փսխել. օգնեցէք, որ նա փսխի:

«Եթէ շնչառութիւնը նուազում է և տեսնում  
էք, որ շուտով պիտի դադարէ, դրէք նրա  
կրծքի կողքերին եռ եկած ջրի մէջ տա-  
քացրած երկաթ: Մի վախէք նրա կաշին  
այրելուց, գրանով հիւանդին կազատէք»:

Մի զգուշութիւն: Երբ երեխայի մարմինը  
դնում էք գաղջ ջրի մէջ, պէտք է զգուշա-  
նալ, որ ջուրը շատ տաք չը լինի, պատահում  
է, որ հիւանդին շուտով տաքացնելու համար,  
նրան ընկղմում են եռ եկած ջրի մէջ և այդ-  
պիսով նրան խաշում:

Գ Լ Ո Ի Խ Գ.

ԱՐԻԻՆՆԱՀՈՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ներքին արիւնահոսութեան մասին:—Ես  
միտք չունիմ խօսելու այստեղ ամեն տեսակ  
արիւնահոսութիւնների մասին: Վէրքից առա-  
ջացած արիւնահոսութիւնը կը բացատրվի մի  
ուրիշ գլխում: Այժմ ես պիտի խօսեմ միայն  
այնպիսի արիւնահոսութիւնների մասին, որոնք  
ինքնուրոյն գոյանում են մարմնի թէ  
դրսում, թէ ներսում, և որոնց դէմ կարելի է  
մի բան անել:

Գթից արիւն հոսելն ամենից յաճախ է  
պատահում: Առհասարակ այդ փոքրիկ արիւ-  
նահոսութեան մեծ նշանակութիւն չը պիտի  
տալ: Բայց չը նայած, որ դա վտանգաւոր չէ,  
այնուամենայնիւ ձանձրացուցիչ է և միշտ աշ-  
խատում են նրա դէմն առնելու:

Այս արիւնահոսութեան դարմանը ժողո-  
վուրդը լաւ է իմանում և նա գործադրում է  
սառը ջուր, կամ ուսերի մէջ տեղ դնում է  
բանալի: Եւ իրաւ, սառ ջուրը ու սառ մե-  
տալը շատ օգտակար են: Միւսնոյն ժամանակ



պիտի բարձրացնել այն թւը, որ գտնվում է արիւնահոս քթածակի կողմը: Տաքացրէք, եթէ կարելի է, նրա ոտերը և սրունքները:

Կայ մի փորձանք, որ դժբախտաբար յաճախ է պատահում և որի դէմ տգիտութեան պատճառով չեն կարողանում կռվել: Ես ուզում եմ խօսել այն արիւնահոսութիւնների մասին, որոնք բերանից են հոսում թքելու կամ փսխելու ժամանակ:

Ո՞րտեղից է գալիս այդ արիւնը:

Ննչառութեան ճանապարհի և մարսողութեան խողովակի ընդհանուր անցքը բերանը լինելով ամեն մի արիւնահոսութիւն, որ առաջ է եկել թոքերում կամ ստամոքսում, անպատճառ պիտի երևան գայ թքի կամ փրսխանքի մէջ:

Փսխած արիւնը հոսում է ստամոքսից և այդ անուանվում է միջարիւնահոսութիւն: Իսկ թքած արիւնը գալիս է թոքերից, որ անուանվում է արիւնաթքութիւն: Բայց այս վերջին դէպքում արնի քանակութիւնը կարող է այնքան շատ լինել, որ նմանում է միջարիւնահոսութեան: Իրա համար աւելորդ չէ այդ երկու տեսակ արիւնահոսութիւնը միմեանցից որոշել:



Միջարիւնահոսութեան մասին:—Միջարիւնահոսութիւնն առաջանում է ստամոքսի հին խոցերից: Բայց կարող է գոյանալ նաև զանազան պատահմունքներից, այսինքն վայր ընկնելուց և ուժեղ հարուածից: Վայր ընկնելը կամ հարուած ստանալը միշտ չեն պատճառում արտաքին վէրքեր: Բայց հիւանդի տառապալի դրութիւնը, ուժերից ընկնելը, ձանձրութիւնը, սփրտնելը, ամբողջ մարմնի վրայ սառ թրտինքը, նողկանքը (փսխելու ցանկութիւնը), զարկերակի փոքրանալը. այս բոլորը ցոյց են տալիս, որ ներսում անկարգութիւն է պատահել:

Եւ իրաւ, նողկանքը շատանում է և հիւանդը դուրս է թափում ինչ որ լինում է ստամոքսի մէջ: Քիչ թէ շատ մարսած կերակուրը դուրս է գալիս արնի մակարդների (սալ կտորների) հետ, որոնց գոյնը այնքան մուգ է լինում, որքան փորձանքը վաղուց է լինում պատահած:

Մի և նոյն ժամանակ հեղուկ ու կարմիր արիւնը ցայտում է նրա բերանից, ապացուցանելով որ ստամոքսի խոցերը դեռ գոյութիւն ունեն և պատռված արնի անօթները դեռ չեն ծածկվել:

Սկզբնական օգնութիւնը: — «Փորձանքն



որտեղ էլ որ պատահած լինի, միշտ կարելի է թարմ ջուր գտնել: Թո՛ղ հիւանդն ումպ- ումպ մի բաժակ ջուր խմի:

«Եթէ ձեր մօտերքը տուն կայ, խնդրէք քիչ աղ, քացախ կամ լիմօն, և ջրի մէջ խառնելով աղը, քացախը կամ լիմօնի ջու- րը, տուէք հիւանդին խմելու: Եթէ կարելի է, թո՛ղ նա կուլ տայ լիմօնի մի քանի կտոր: Աղը և թթուատը ստամոքսի մէջ կար- կամեցնում, կուչ են բերում արնի անօթ- ները, որոնցից արիւն է հոսում, և մի և նոյն ժամանակ արիւնը մակարդում, պնդաց- նում են:

«Եթէ կարող էք սառուց գտնել մանրաց- րէք և թո՛ղէք հիւանդը մի քանի կտոր դրա- նից կուլ տայ:

«Ի հարկէ եթէ ձեր ձեռքի տակ դեղեր կան, կարող էք գործ ածել: Վերջէք Վերջըլօ- րաւոր նրկաթը (хлорофе желёзо, perchlo- rure de fer, te<sub>2</sub> cl<sub>6</sub>). 15 կաթիլ նրանից ա- ծէք սառ ջրի մէջ և տուէք հիւանդին ումպ ումպ խմելու:

«Միւսնոյն ժամանակ փորի վրայ շարունակ թաց կօմպրէսներ դրէք. իսկ եթէ կարողէք մանանեխից (գարչիցա) սպեղանի շինել, դրէք հիւանդի սրունդների և թևե-

րի վրայ, դրանով արիւնը դէպի այդ կող- մերը կը քաշէք և այդպիսով ստամոքսի ա- րիւնահոսութիւնը կը քչացնէք.»

Արիւնաթքութեան մասին:—Սրիւնաթք- քութիւնը կարելի է հեշտութեամբ զանազանել միջարիւնահոսութիւնից նրանով, որ այս դէպ- քում արիւնը գալիս է հազարու ժամանակ:

Շնչառութեան խողովակները հեշտութեամբ են գրգռվում, երբ նրանց մէջ մի որ և է օ- տար առարկայ կայ, ինչպէս օրինակ, արիւն, որ այնպէս արագութեամբ է դուրս ձգվում, որ մին- չև անգամ ժամանակ չի լինում որ մակարդվի.

Արդ՝ այս տեսակ արիւնահոսութեան ժա- մանակ լինում են՝ հազ, արնոտ թուք, գու- նաթափութիւն, շնչասպառութիւն և թու- լութիւն:

Սկզբնական օգնութիւնը:— «Բաց արէք սենեակի պատահանները, որ հիւանդը կարո- դանայ մաքուր օդ ծծել: Ո՛չ մի շարժմունք, ո՛չ մի աղմուկ, ո՛չ մի խօսակցութիւն չըպիտի լինին նրա մօտ. հիւանդի համար կատարեալ հանգստութիւն է հարկաւոր.»

«Թո՛ղ նա նստած լինի և չը պառկի:

«Ինչպէս միջարիւնահոսութեան, նոյնպէս



և այս դէպքում, սառ ջուրը, աղը, լիմօնը, սառուցը հիւանդին օգտակար են. թէպէտ սրանց ներգործութիւնն անուղղակի է, որովհետև խմիչքը ստամոքսն է գնում, իսկ այս դէպքում թոքերիև ոչ թէ ստամոքսի մէջ է արիւնահոսութիւնը. բայց նրանց օգտակարութիւնը, ինչպէս ասացինք, անուղղակի է, այսինքն նրանք ազդում են ընդհանուր արիւնաշրջութեան վրայ:

«Աշխատեցէք արիւնը քաշել դէպի ոտերը, թւերը և դէպի կաշին: Իրա համար դրէք մանանեխի սպեղանի կամ քացախի կօմպրէս ոտերի, սրունքների, ձեռքերի և թւերի վրայ: Իսկ կրծքի վրայ դրէք սառը կօմպրէսներ»:

«Գօտիով կամ թաշկինակով պինդ կապէք վերջնանդամների (թւերի և ոտերի) վերևի մասը, այնպէս որ մի առ ժամանակ արիւնն այդտեղ մնայ և չըգնայ դէպի հիւանդացած թոքերը»:

Ահա արիւնահոսութիւններ, որոնք յաճախ են պատահում և որոնց դէմ կարող էք կռվել: Ես մի կողմն եմ թողում միւս բոլոր արիւնահոսութիւնները, որոնց դէմ դուք ոչինչ չէք կարող անել:

Այժմ դառնանք զրբոյկի Երկրորդ մասին:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

Դրսի պատճառներից զոյսցած փորձանքներ.

Այստեղ ես պիտի խօսեմ այն տեսակ փորձանքների մասին, որոնց պատճառները դրսից են գալիս, այսինքն մեր մարմնի մէջ չեն լինում: Ինչպէս և առաջին մասում, այստեղ ևս կը նկարագրեմ նախ՝ աւելի հասարակ ու անվտանգ փորձանքները եւ կարգով կը շարունակեմ հասարակներից դէպի բարդերը, դէպի վտանգաւորները:

Գ Լ Ո Ի Խ Ա.

ԶԱՐԴՈՒԱԾԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ է ջարդուածը:—Ձեզանից ամեն մէկն անկասկած հասկացողութիւն ունի ջարդուածի մասին:—Բռուկցքի, ոտի, փայտի կամ մի որ և է պինդ առարկայի հարուածը քիչ թէ շատ ջարդում է մարմնի հարուածած տեղը:

Եթէ դուք վայր էք ընկնում կամ գիպչում



մի կարծր առարկայի, ինքներդ էք ջարդում ձեր մարմինը:

Ինչպէս տեսնում էք, ջարդուածի աստիճանները բազմաթիւ են, և բարեբախտաբար ջարդուածը միշտ վտանգաւոր չէ լինում, բայց ինչպէս յետոյ կը տեսնէք, երբեմն ջարդուածը մեծ անկարգութիւններ է առաջացնում:

Արդ՝ թնչ է ջարդուածը:

Երբ մի պինդ առարկայ ուժեղ կերպով դիպչում է մեր մարմնին, նա ճնշում է ոստայնները և այդպիսով նրանց սեղմում և հուպ է տալիս:

Այժմ տեսնենք ինչպէս են կարգաւորված օրգանական ոստայնները և հարուածից նրանք ինչպէս են ճնշվում:

Մարմինը կազմված է՝

1. Ընդհանուր ծածկոցից՝ կաշիից, որ ունի նեարդներ և արնի անոթներ.

2. մկաններից, որոնք շարժումն են առաջ բերում.

3. Ոսկորներից, որոնք մարմնի հիմքն են կազմում.

4. Վերջապէս ներքին օրգաններից (գործարաններից), որոնցից ամեն մէկն իր յատուկ գործողութիւնն ունի:

Սրանք բոլորը կարող են ջարդվել. ինչ

վերաբերում է ոսկորներին, սրանց մասին կը խօսեմ մի այլ գլխում:

Այժմ խօսենք կաշիի մասին:

Նա բաղկացած է՝ 1. դրսի բարակ թաղանթից, որ անուանվում է վերնամաշկ (էպիդէրմ). 2. աւելի հաստ շերտից, ներքնամաշկից (դէրմ), որի մէջ գտնվում են նեարդների ամենաբարակ ծայրերը, արնի անոթների ամենանուրբ ցանցերը: Այդ բոլորը ծածկված և պատսպարված են ճարպի մէջ, որ ոստայններին մի յայտնի առաձգականութիւն է տալիս և նրանց պաշտպանում է դրսի հարուածներից: Սրանց տակը գտնվում են աւելի դիմացկուն թաղանթներ, որոնց անուանում են *միլային թաղանթ* (ապօնէվրօզ), և որոնք մկանների համար պատեան են կազմում:

*Ջարդուածներ առանց վերքերի:*—Մարմնի կաշին հարուած ընդունելու ժամանակ, այսպէս ասած ետ է քաշվում, կուչ է գալիս, օգուտ քաղելով իր և իր ներքև գտնվող իւղի առաձգականութիւնից: Բայց այս առաձգականութիւնը սահման ունի, և համարեա թէ իսկոյն հանդիպում է մի պինդ առարկայի—ոսկորի, որ դիմադրում է նրան: Այնուհետև նա սեղմված է գտնվում այդ պինդ առարկայի և հարուածի մէջ: Եթէ հարուածը մի քիչ ուժեղ



է, նեարդների թելերը յաճախ ջարդվում են, որից և առաջանում է այն ցաւը, որմենք զգում ենք հարուած ընդունելիս:

Փոքրիկ անօթները նոյնպէս պատառվում են, և սրանց մէջ պարունակվող արիւնը դուրս է թափվում: Այս արիւնը, տարածվելով անօթներին շրջապատող կակուղ ոստայնների մէջ, կազմում է կապտագոյն բծեր, որոնց դուք հարիւր անգամ տեսած կը լինէք հարուած տալուց կամ ընդունելուց յետոյ:

Անօթներից դուրս եկած այս արիւնը պիտի նորից ներս ծծվի, և այս դէպքում մի և նոյնը կը պատահի, ինչ որ ես ասել եմ ձեզ կաթուածի մասին, երբ մի անօթ պատառվում է ուղեղի մէջ: Փոքրիկ անօթները, օգուտ քաղելով իրանց մի յատկութիւնից, կամաց-կամաց թափված արիւնը իրանց մէջ կընդունեն, մեռած ոստայնները նորից կենդանութիւն ստանալով կը նորոգեն վնասված մասերը: Ահա թէ ինչ է պատահում, երբ ջարդուածը թեթև է:

Բայց եթէ թափված արնի քանակութիւնը մեծ է և ծծվելով այդ արիւնը չէ անհետանում, այդ ժամանակ մնացած արիւնը լուծվելով թարախ է դառնում: Սակայն այս վերջինն առ այժմ մեզ չի հետաքրքրում. ես նրա մա-

սին յիշեցի միայն, որ տեսնէք թէ ինչ է պատահում: Երբ ջարդուածն աւելի ծանր է.

Ղէրքախաւսն ջարդուածները:—Թէպէտ վէրքերի մասին խօսելու եմ մի առանձին գլխում, բայց այստեղ մի քանի խօսքով պիտի բացատրեմ այն ջարդուածները, որոնք միևնոյն ժամանակ ունին վէրքեր:

Յաճախ պատահում է, որ կաշին չը դիմանալով ուժեղ հարուածին՝ պատռվում է: Այստեղ, մեռած ոստայնների և կապոյտ բծերի մէջ, մենք տեսնում ենք մի անկանոն վէրք, որ գոնէ սկզբում պիտի խնամել ինչպէս մի հասարակ ջարդուած: Մենք կը տեսնենք յետոյ թէ ինչպէս պիտի խնամել այն վէրքը, որ գոյացել է սուր գործիքից:

Սկզբնական օգնութիւնը:— Ենթադրենք որ պիտի դարմանել մի հասարակ, առանց վէրքերի ջարդուած:

Եթէ ջարդուածը գլխի վրայ է, դուք կը նկատէք որ այդ տեղում մի սահմանափակ ուռույց է գոյացել: Գործադրեցէք սառ ջուր: Գրէք ուռած տեղի վրայ մի մետալի դրամ, որով փոքր ինչ կը ճնշէք ուռույցը: Այդ ճնշումը հալածում է հաւաքված արիւնը, աւելացնում է ծծող մակերևոյթը, և այդպիսով օգնում արնի ներս ծծվելուն:



Սառ ջուրը գործում է ինչպէս անօթների կարկամեցնող, կուչ տուող. վերև ասել եմ, այժմ էլ կրկնում եմ որ ջարդուածի ամեն դէպքում, երբ վերքեր չը կան նախ և առաջ պիտի գործ անել սառ ջուր:

«Եթէ ջարդուածը մարմնի մի անդամի վրայ է, հիւանդին այնպիսի դիրք տուէք, որ վնասված անդամի մկանները բոլորովին չը շարժվեն, իսկ դրա համար աշխատեցէք որ անդամն ոչ բոլորովին ծալած լինի և ոչ բոլորովին մեկնած: Փորձել են, որ անդամները կիսածալ դրութեան մէջ բոլորովին հանգիստ են մնում:

«Եթէ ջարդուածի հետ վերք էլ կայ, ուշադրութեամբ մաքրեցէք շորի կտորներից, հողից և առհասարակ ամեն մի օտար սոււարկայից, որ կարող է վերքի մէջը կամ շուրջը լինել:

Կտաւի կամ մի ուրիշ գործուածքի կտորով թեթև կապեցէք վնասված տեղը:»

Եթէ բժշկի միջամտութիւնը հարկաւոր է ձեր օգնութիւնից յետոյ, դուք դարձեալ հիւանդին ծառայութիւն էք առել մեղմացնելով նորս ցաւը և հեշտացնելով յետագայ օգնութեան գործը:

Յաճախ պատահում է, որ փորձանքից յետոյ

տոյ մարմնի վրայ չեն երևում ոչ վերք կամ ջարդուած, ոչ ոսկոր է կտրած լինում կամ դուրս ընկած և ոչ արիւն է լինում թափված:

Երբեմն հիւանդը զգում է մի անորոշ ծանրութիւն. նա կարողանում է ման գալ և յայտնում է, թէ այլևս ոչ մի բանի պէտք չունի, և շարունակում է աշխատել կամ գընալ:

Բայց հէնց որ սկսում է աշխատել կամ գնալ, իսկոյն և եթ նա զգում է անտանելի ցաւեր:

Սյս դէպքում հիւանդին մենակ մի թողնէք. նրա ոյժերը շուտով կը սպառվեն:

Թէպէտ գրսում ոչ մի վիրաւորված տեղ չը կայ, բայց նրա ներսի անդամները վնասված են լինում:

«Ստիպեցէք հիւանդին չը շարժվել, այլ բոլորովին հանգիստ դրութեան մէջ մնալ, և եթէ փորձանք պատահած տեղը յարմար չէ հիւանդին օգնութիւն հասցնելու, ամենայն զգուշութեամբ տեղափոխեցէք նրան մի այնպիսի տեղ, ուր կարելի է նրան դարմանել:»



Գ Լ Ո Ւ Խ Բ.

ՎԷՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Սուր զործիքներից առաջացած վերքեր:—  
Երբ մի սուր առարկայ դիպչում է մեր մարմ-  
նին մեր ոստայնները կտրվում են: Եթէ մըտա-  
բերում էք ինչպէս են կարգաւորված ոստայն-  
ները, դուք իսկոյն հեշտութեամբ կը հասկա-  
նաք թէ ոստայների կտրուելուց ինչ անկար-  
գութիւն է առաջ գալիս: Նախ՝ կաշին է ճեղ-  
քվում, յետոյ սրա մէջ պարունակվող նեարդնե-  
րը և անօթներն են բաժանվում, իսկ փոքր  
ինչ յետոյ իւղը, ճիւղային թաղանթը, մկան-  
ները և հստակ անօթները: Այս տեսակ վերքն  
ունի երեք նշան:

1: Ցաւ. որովհետև շատ նեարդներ կտրու-  
վում են:

2. Արնի հոսանք, որ արնի անօթների կը-  
տրրտվելուց է առաջ գալիս:

3. Վերքի շրթունքների միմեանցից հե-  
ռանալը: Երթունքները միմեանցից միշտ հե-  
ռանում են, որովհետև ոստայններն սուա-  
ձգական են. նաև մկանները, զրգուվելով վեր-

քի ազդեցութիւնից, կծկվում են և այդպի-  
սով վերքի շրթունքները միմեանցից հեռա-  
ցնում: Եթէ ուզում էք լաւ ըմբռնել բա-  
նի էութիւնը, մի սուր դանակով հարուած  
տուէք թեթև ձգված կաուչուկին, և դուք  
միանման երևոյթ կը տեսնէք:

Այժմ տեսնենք, թէ ինչու այս դէպքում  
արնի հոսանքը յորդառատ է և երկարատև,  
մինչդեռ ջարդուածում այդ հոսանքը թեթև  
է և ինքն ըստ ինքեան է կանգնում:

Արնի անօթները, ինչպէս դուք իմանում  
էք, երկու տեսակ են: *Երակներ*, որոնք ա-  
րիւնը դէպի սիրտն են տանում և կազմված են  
երկարութեամբ դարսված մանրաթելերից: Ու-  
րեմն երբ երակը կտրված է, նրա մանրաթե-  
լերը այլևս ձգված չը լինելով, արագութեամբ  
միմեանց մօտիկանում են և հեշտութեամբ  
ծածկում զոյսցած բացուածքը: Այս բացուած-  
քի մէջ զտնվող արիւնը հեշտութեամբ մա-  
կարդվում է օդի ազդեցութեան տակ և խցանի  
պէս նրան ծածկում: Հետևաբար երակներից  
պիտի քիչ արիւն թափվի:

Իսկ շնչերակներն այդպէս չեն: Սրանք  
ուրիշ կազմուածք ունին. սրանց մանր թելերը  
փոխանակ ըստ երկարութեան դասաւորված



լինելու, բոլորակաձև են և նման մի շարք օղակների:

Երբ մի շնչերակ կտրված է, այն օղակը, որ կտրված տեղի եզերքումն է, մնում է բաց և այդտեղից արիւնն անընդհատ վազում է: Բայց դուք կը հարցնէք, մի՞թէ մի և նոյնը չի պատահում ամեն մի վերք ստանալիս, լինի դա ջարդուած, կամ սուր գործիքից գոյացած:

Ոչ. և ահա թէ ինչու: Երբ վերքն առաջ է եկել ջարդուածից, այս դէպքում ուտայնները ճմլած են և պատռուոված: Կտրված տեղի մակերևոյթը պարզ, ողորկ չէ, այլ ծոպաւոր է և հէնց այդ ծոպերն են օգնում շնչերակի բացուածքը ծածկելու: Բացի սրանից, շնչերակի ներսի առաձգական թաղանթը կուչ է գալիս և համարեա ծածկում է անօթի բերանը:

Սուր առարկայից գոյացած վերքի մէջ ուտայնները ջարդված չեն, և ոչ էլ շնչերակները մեռած, այլ երկուսն էլ պահպանում են իրանց առաջվայ յատկութիւնները: Ներսի թաղանթն աշխատում է խցան կաղմել, բայց միայն իր ոյժերին թողած, նա անկարող է դիմանալ արնի այն ավիքների դէմ, որոնց սիրտն է ուղարկում և որոնք փշրում են նրա՝ թաղանթի ջանքերը: Կտրված անօթն երկար մնում է բաց և արիւնն առատութեամբ հոսում է: Պէտք է

կռվել դրա դէմ և յաճախ այդ կռիւն առանց դժուարութեան չէ լինում:

Սկզբնական օգնութիւնը: — Զեր առաջին ջանքը պիտի լինի արիւնահոսութիւնը կանգնեցնել: Իրա համար ստիպեցէք անօթներին, որ կուչ գան, փոքրանան: Ես ձեզ շատ անգամ ասել եմ, որ ամենայամար կուչ բերողը ցուրտն է: Արդ՝ գործ ածեցէք մեծ քանակութեամբ սառչուր: (1)

Նոյնպէս պիտի չը թողնել, որ արիւնը սրտից դէպի վերքը գայ: Սրա համար պինդ կապեցէք վիրաւորված անդամը, իհարկէ վերքից վերև, այսինքն վերքի և սրտի մէջ:

Նայեցէք, եթէ վերքը մաքուր է և մէջն օտար առարկայ չը կայ, որքան կարելի է մօտեցրէք միմեանց նրա եզերքները և թեթև կապեցէք:

Անգամին այնպիսի դիրք տուէք, որ վեր-

1) Արիւնահոսութիւնը կանգնեցնելու համար չը պէտք է վերքը խանձել՝ այսինքն այրած չորի կտոր դնել, ինչպէս մեզ մօտ են անում: Իրաւէ խանձելն արիւնը կանգնեցնում է, բայց յետոյ մեծ արգելք է լինում վերքի առողջանալուն:



քի եզերքներն աւելի հեշտութեամբ մօտենան:

Շարունակեցէք գործագրել սառ ջուր, և եթէ հիւանդը շատ արիւն է կորցրել, մի քիչ լաւ գինի տուէք: Ասացի մի քիչ, որովհետև եթէ խեղճին հարբեցնէք, դրանով դուք կարագացնէք նորա սրտի գործունէութիւնը և արիւնահոսութիւնը նորից կը սկսվի:

Ծակող գործիքների պատճառած վերքեր:—

Այս դէպքում սրածայր գործիքը լայն վերք չէ բաց անում, այլ աւելի դէպի խորն է մտնում: Նա քիչ անօթներ է կտրում, բայց եթէ նա մէկը բացել է, դուք յաճախ չէք կարողանում տեսնել այն: Այստեղ՝ վերքի եզերքները միմեանցից հեռացած չեն: Գուք տեսնում էք մի փոքրիկ անցք, ըստ երևոյթին անվտանգ, որ ընդհանրապէս արիւն չէ տալիս, կամ շատ քիչ է տալիս, և դուք հանգստանում էք ու ասում թէ սա ոչինչ բան է: Շատ էլ հաւատ մի ընծայէք դրան: Գործիքը կարող է շատ խոր մտնել և յաճախ հետեւանքներն աւելի վտանգաւոր են լինում, քան թէ արտաքինն է ցոյց տալիս:

Սկզբնական օգնութիւնը:— Ուր որ էլ լինի ծակվածը, աշխատեցէք իսկոյն և եթ

ծածկել այդ փոքրիկ վերքը: Աշխատեցէք, որ օդ չը մտնի այդ անցքով: Այս դէպքում, ինչպէս և միշտ, գործածեցէք սառ ջուր: Հիւանդը թող չը շարժվի, այլ հանգիստ դրութեան մէջ մնայ:

Գ Լ Ո Ւ Խ Գ

ՀՐԱԶԼՆԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՎԼՐՔԻ ՄԱՍԻՆ

Գնդակից առաջացած վերքեր:— Ենթադրենք որ մէկը գնդակով է վիրաւորված: Այս վերքը պատկանում է ջարդուած անուն կրող վերքերի տեսակին: Եւ իրաւ, գնդակը սուր աւարկալ չը լինելով, եթէ մտնում է ոստայնների մէջ՝ ջարդում ուսեղմում է նրանց: Մի և նոյն է, թէ գնդակը պատուել կամ թեթև այրել է կաշին. խոր մտել է ոստայնների մէջ, թէ մի կողմից մտել է միւս կողմից դուրս եկել. ամեն մի դէպքում նա մեռցնում, պատուում, ջարդում, փշրում է: Արդ՝ սիրելի ընթերցող, այս տեսակ վերքը պիտի խնամել, ինչպէս մի ջարդուած:



Վիրաւորվածը պատահմունքի ժամանակ առհասարակ մեծ ցաւ չէ զգում: Վերքից համարեա արիւն չէ հոսում, եթէ միայն ոչ մի մեծ շնչերակ վնասված չէ:

Ի՞նչու այս դէպքում առհասարակ արիւնահոսութիւնը թեթեւ է: Դուք այդ պիտի իմանաք, եթէ միայն մտաբերում էք թէ ի՞նչ է պատահում, երբ շնչերակները ջարդվում են:

Վերքն աւելի վտանգաւոր է, եթէ նա գլխի, կրծքի, կամ փորի վրայ է լինում:

Գնդակիկներին\*) առաջացած վերքեր:— Վերքեր պատճառող գէնքն եթէ գնդակիկներով է լցրած, երկու դէպք կարող է առաջացնել: Առաջին՝ եթէ հարուածը շատ մօտիկից է տուած՝ գնդակիկները ժամանակի քրչութիւնից չեն ցրվում և այս դէպքում միայն մի լայն և խոր վերք են գոյացնում: Երկրորդ՝ եթէ վիրաւորվածը բաւական հեռու է եղել գէնքից, գնդակիկները միմեանցից հեռանալով, գոյացնում են բազմաթիւ փոքրիկ վերքեր, որոնք առհասարակ անվտանգ են լինում:

Սկզբնական օգնութիւնը:—Ի՞նչ պիտի անել ամեն մի դէպքում:

«Ուշադրութեամբ քննեցէք վերքը, կամ վերքերը և մաքրեցէք այն շորի կտորնե-

\*) Դորը.

րից, որոնք գնդակի հետ միասին կաշու մէջ են մտել: Եթէ վերքի մէջ նկատում էք գնդակը և կարելի է նրան մատերով հանել վերքից, աշխատեցէք շուտով հանել:»

«Պէտք է իմանալ, որ հրագէնից առաջացած վերքերին ձեռք տալը կամ շօշափելն աւելի քիչ ցաւ է պատճառում իսկոյն և եթէ փորձանքից յետոյ, քան թէ մի քիչ ժամանակ անցած:»

«Եթէ գնդակը չէք նշմարում վերքի մէջ, մի աշխատէք գտնելու, թէ չէ դուք աւելի խորը կը մղէք նրան և այդպիսով աւելի կը դժուարացնէք բժշկի գործը:»

Շատ էլ մի անհանգստանաք, եթէ գրնդակը կամ գնդակիկները նստած են ոստայնների մէջ: Փորձերը ցոյց են տալիս, որ այս օտար առարկաները յաճախ անվտանգ են լինում: Ես ճանաչում եմ շատ մարդկանց, որոնք ունենալով իրանց մտրմնի մէջ գնդակ կամ գնդակիկներ՝ երկար տարիներ ապրում են առանց ցաւ զգալու: Սրանցից մէկը, ահա վեց տարի է, գլխի կաշիի մէջ ունի բազմաթիւ գնդակիկներ, որոնցից մի քանիսը ես կարողացայ դուրս հանել, բայց շատերը մնացին



իրանց տեղը և ոչ մի անհանգստութիւն չեն պատճառում յիշած մարդուն:

Ես կարող եմ շատ օրինակներ բերել, թէ ինչպէս մեր ոստայնները համբերութեամբ պահում են իրանց մէջ փոքրիկ առարկաներ, ինչպէս ըէվօլվէրի գնտակները:

«Վերքը ջրով լաւ լուացէք, և անընդհատ սառ կօմպրէսներ դրէք մինչև բժշկի գալը: Բայց եթէ դուք բժշկական արուեստին անծանօթ էք, ձեզ արգելված է սըրանից աւել խնամք տանել վերքին:»

Գ Լ Ո Ւ Խ Գ.

ԱՅՐՈՒԱԾԻ ԵՒ ՅՐՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ

Այրուածի նշանները:—Կրակը, ինչպէս դուք իմանում էք, այրում, կործանում է ինչ բանի որ կպչում է, որովհետև նրա տաքութիւնը շատ մեծ է: Եթէ այստեղ ես խօսում եմ մի ճշմարտութեան մասին, որ մի քիչ միամիտ կերևայ, դրանով ուզում եմ ասել, որ ոչ միայն

կրակն է այրում, այլ ամեն մի տաքացած առարկայ: Պինդ, հեղուկ և զազային առարկաները բոլորն էլ քայքայում են մեր ոստայնները, եթէ նրանց ջերմութիւնը բարձր է:

Եթէ տաքութեան գործողութիւնը շատ արագ չէ և երկար չէ տևում, նա միայն կարմրացնում է մեր կաշին և թեթև ցաւ պատճառում, որ իսկոյն անհետանում է առանց մի վտանգաւոր հետևանք թողնելու:

Այս մի տեսակ արնի համախռնութիւն է:

Բայց յաճախ այրուածն աւելի բարդ է լինում: Բարձրացած կաշիի վրայ փուչիկներ են երևում: Ներքնամաշկի մէջ գտնվող նեարդները զրգուված լինելով, սուր ցաւ են պատճառում: Արիւնաշրջութիւնը խափանված լինելով վերջին անօթներում, կաշիի մակերևույթն ընդունում է սփրտնած և գեղին գոյն:

Եթէ այրուածն աւելի խիստ է և կաշին բոլորովին քայքայված, կարմիր վերքից դուրս է գալիս մի տեսակ գեղնաւուն հեղուկ: Այս դէպքում ցաւն անտանելի է և խեղճ վիրաւորվածը ճիշեր է արձակում:

Վերջապէս եթէ այրուածն աւելի խորն է, բոլոր ոստայնները քայքայվում են և ածուխ դառնում:

Բոլոր դէպքերում մի շան է աչքի ընկ-



նում, այն է որ համարեա թէ արնի կորուստ չը կայ:

Ի՞նչու:

Նախ՝ որ տաքութիւնը կարծրացնում է ստայններին, ինչպէս և արնի անօթներին: Արդ՝ մենք իմանում ենք, որ պատուոված անօթներն իրանք իրանց են փակվում:

Երկրորդ՝ որ տաքութիւնը մակարդում է արիւնը, որ անօթների մէջ թանձրանալով ծածկում է բացուածքը:

Ի՞նչու մարդս ցաւ է զգում, երբ կաշիի վերնամաշկը պոկված, հեռացած է:

Վերնամաշկն արգելում է, որ օդը կպչի ներքնամաշկին, որի մէջ նեարդներ կան, օդը զրգուում է այդ նեարդները և ցաւ պատճառում: Քանի որ վերնամաշկն ամբողջ է, թէկուզ նա բարձրացած էլ լինի փուչիկի պէս, ցաւն այնքան մեծ չէ, բայց հէնց որ նա հեռացաւ կաշիից, օդը կպչում է ներքնամաշկին և անտանելի ցաւեր պատճառում:

Այս բոլորն ասում եմ նրա համար, որ օգնութիւն հասցնելիս, զգուշանաք ձեռք տալու վերնամաշկին, և եթէ նա պոկված է, իսկոյն վէրքը ծածկէք մի որ և է անթափանցիկ բանով, օրինակ, ձիթով, որ կը զիմադրէ օդի ներդործութեան:

Սկզբնական օգնութիւնը:—Նախ՝ եթէ այրուածը վէրք չէ գոյացրել.

Վերէք այրված տեղը սառ ջրի մէջ, եթէ այդ կարելի է. իսկ եթէ որ և է պատճառով չէ կարելի, ծածկեցէք թրջած շորերով, ձիւնով, սառուցով, թարմ ցեխով: Յետոյ ծածկեցէք քերած գետնախնձորով, թանաքով և այլն: Այս բոլորն իր մէջ է քաշում տաքութեան մի մասը և զովացնում այրված տեղը:»

Եթէ վերնամաշկը հեռացած է.

Վործ ածեցէք իւղալի բաներ, օրինակ՝ ձէթ, իւղ, կամ ձուի սպիտակուց. ձէթն ամենից յարմար է. յետոյ վէրքը ծածկեցէք բամբակի հաստ շերտով և մի շորով կապեցէք: Թո՛ղ հիւանդը մի այնպիսի դիրք ընդունի, որ այրված անդամը ձգված լինի:»

Յրտահարի մասին:—Այս գլխի վերնագրում ես ցրտահարը դրել եմ Այրուածի մօտ: Չը կարծէք, թէ ես այդ պատահմամբ եմ արել, կամ թէ առանց զիտաւորութեան: Ի՞նչու կարող էք զարմանքով հարցնել, թէ ինչպէս կարելի է միմեանց մօտեցնել երկու բոլորովին հակառակ պատճառներ ունեցող փորձանքներ:



Բայց, ինչպէս կը տեսնէք, այս երկուսի հետեւանքներն շատ բաներում իրար նման են:

Իրաւ են ասում, թէ ցուրտն այրում է մեր ոստայնները: Յուրտը մեր ոստայնների մէջ միւսնոյն անկարգութիւնն է գոյացնում, ինչ որ չափազանց տաքութիւնը:

Քաղաքում ապրողները շատ հազիւ են ցրտահար լինում: Այստեղ օդը բաւական կանոնաւորված է, և շատ յարմարութիւններ կան ցրտից ազատվելու, իսկ բաց տեղերում, դաշտում միւսնոյնը չէ. այստեղ քամին արձակ համարձակ փչում է, և վայր եկել տարել է այն մարդուն, որ այդտեղ երկար կը մնայ, ցուրտն իսկոյն նրան կը յաղթի.

Մի քանի խօսք ասենք այն մարդկանց համար, որոնք բարեբախտաբար իրանց վրայ փորձով չեն տեսել երկարատեւ ցրտի ազդեցութիւնը:

Նախ՝ ցրտահար տեղը կարմրում է և քոր գալիս, յետոյ ուռչելով, ցաւեր է պատճառում: Կաշին ուռած է, կոշտ է, տեղ-տեղ բարձրանում է և փուչիկներ կազմում:

Եթէ ցրտի գործողութիւնը շարունակվում է, մի զարմանալի բան է պատահում, այն է որ ցաւը բաւական մեղմանում է: Կաշին սրփրտնում է, անզգայանում և պնդանում: Հիւանդը խաբվելով այս երևակայական հան-

գրատութիւնից, ուզում է քնել, նրա գլուխը թեքվում է և ոտերը թուլանում: Այս տեսակ քնի դէմ պէտք է խիստ կռվել և փոխցնել, թէ չէ վերջը շատ վտանգաւոր կը լինի.

Սկզբնական օգնութիւնը:— «Սմէն կերպ զգուշացէք հիւանդի ցրտահար մասը կրակին մօտեցնելուց, թէ չէ յանկարծակի փոփոխութիւնից կարող են ոստայնները մեռնել: «Շփեցէք ցրտահար տեղը՝ արիւնաշրջութիւնը վերականգնեցնելու համար, բայց ոչ թէ տաք հեղուկով այլ ձիւնով, սառ ջրով կամ թէ միայն հասարակ ձեռքով:»

«Եթէ հիւանդը կարող է մանգալ, ստիպեցէք նրան շարժուածքներ գործելու, և քիչ օդի տուէք, եթէ ձեռքի տակ կայ: Չը վախենաք նրան դրանով մի քիչ զըրգուելու. ընդհակառակը՝ զրգուելով, դուք կ'արագացնէք նրա արիւնաշրջութիւնը:»

«Երբ ցրտահար տեղը շփելուց քիչ տաքացել է, և դուք տեսնում էք, ինչպէս այդ տեղը կարմրել է արնի հաւաքվելուց, այդ ժամանակ, միայն այդ ժամանակ, քիչ-քիչ տաքացրէք նրան, բայց զգուշացէք հիւանդին կրակին մօտեցնելուց: Պէտք է տաքութիւնը ներսից գայ և ոչ դրսից:»



Գ Լ Ո Ի Խ Ե .

ԹՈՒՆԱՒՈՐ ԿԾԱԾԻ ԵՒ ԽԱՅԹԱԾԻ ՄԱՍԻՆ .

Այստեղ ես չը պիտի խօսեմ հասարակ կը-  
ծածի մասին, որովհետեւ նա նման լինելով ջար-  
գուածին պէտքէ նրա պէս դարմանել, այսինքն  
ինչպէս նկարագրել եմ գլուխ Ա.-ի մէջ:

Ես բացատրելու եմ միայն թունաւոր կը-  
ծածները, այսինքն երբ ամբողջ մարմինը մի  
տեսակ թունաւորված է: Թունաւոր կծածնե-  
րը սրանք են՝

1. Զրվախուժիւն.
2. Օձի կամ ուրիշ սողունների կծածը.
3. Միջատների խալթուածը, որի հետ մի  
քանի խօսք էլ կասեմ շարքօնի մասին:

Զրվախուժեան մասին:—Սրա մասին շատ  
են խօսել, բայց համարեա քիչ բան են բա-  
ցատրել մինչև յայտնի գիտնական Պաստօրի  
նորագոյն գիւտերը:

Այստեղ աւելորդ է իմանալ կատաղած շան  
թոյնի տեսական կողմը: Եթէ մի մարդ վա-  
րակված է այդ զարհուրելի հիւանդութիւնով,  
գուք անկարող էք դարմանել նրան այն ժա-

մանակ, երբ նա արդէն ցոյց է տալիս ջրվա-  
խուժեան նշաններ, որոնք երևան են գալիս  
կծելուց 30 կամ 40 օր յետոյ: Դուք պէտք է  
իմանաք միայն, թէ ինչ է հարկաւոր անել,  
երբ մէկին կծել է այնպիսի կենդանի, որին կաս-  
կածում են, թէ կատաղած է, այսինքն ջրվա-  
խուժիւն ունի:

Ես ասում եմ՝ «կասկածում են, թէ կա-  
տաղած է», որովհետեւ դրա մասին միշտ լաւ  
տեղեակ չեն լինում: Բայց ես ձեզ խորհուրդ  
եմ տալիս ամեն մի դէպքում հիւանդին դար-  
մանել այնպէս, իբր թէ նրա վէրքը վտանգա-  
ւոր է: Լաւ է մի քիչ անհանգստութիւն կրել  
և հիւանդին էլ մի քիչ չարչարել, քան թէ  
ուշագրութիւն չը դարձնելով, նրան վտանգի  
ենթարկել:

Ահա մի մարդ, որին կծել է մի կենդանի,  
լինի դա շուն կամ կատու, միւսնոյն է: Կեն-  
դանին վազվզում էր և կատաղած էր երևում:  
Նա ուրիշ մարդկանց և կենդանիների էլ է  
կծել: Մի խօսքով, կարծում են թէ նա ջր-  
վախուժիւն ունի:

Սկզբնական օգնութիւնը:—Նախ՝ հաւա-  
տացրէք վերաւորվածին, որ նրան կծող կենդա-  
նին ջրվախուժիւն չէ ունեցել: Զը կայ մի հի-  
ւանդութիւն, որի ժամանակ հոգեկան դրու-



Թիւնն այնքան լարված լինի, որքան այս հիւանդութեան ժամանակ: Ապարդիւն մտածմունքները կարող են վատ հետեւանքներ առաջացնել, և պատահած են մարդիկ, որոնք մեռել են տխրութիւնից և հալու մաշից, երեակայելով թէ կծված են կատաղած կենդանուց, թէպէտ այդ կենդանին ջրվախութեան ոչ մի նշան չէ ցոյց տուել: Արդ, ամենայն կերպ հանգստացրէք հիւանդին և միւսնոյն ժամանակ գործեցէք:

Նտապեցէք վերքից արիւն հոսեցնելու, գործադրելով սրա համար շնչահանը (արնի սրուակը, պոզը), ինչպէս վերև եմ բացատրել (Տեսնել երես 22-23): Թաշկինակով կամ գօտիով պինդ կապեցէք վերքի վերևի մասը սրա և սրտի մէջ թույլ չը տալու համար, որ թոյնն այսպիսով ընդհանուր արիւնահոսութեան մէջ մտնի: Ասում եմ վերքի և սրտի մէջ: Պարզեմ ասածս: Օրինակ, եթէ ձեռքն է կծված, պէտք է թևն ամուր կապել. եթէ սրունդի վրայ է վերքը, այս դէպքում ազդրը (բուզը) կապեցէք: Երբ վերքը բաւական արիւն է թափել, այրեցէք նրան կարմրացած երկաթով:»

Ահ, ցաւ կը տայ, բայց ինչ արած: Համոզված եղէք, որ վիրաւորվածը հեշտութեամբ կը ցանկանայ ենթարկվել այդ գործողութեան,

քան մշտապէս կասկածել, թէ ջրվախութեամբ հիւանդ է:

«Եթէ կարող էք գտնել մի քիչ բարկկալաքար (potasse caustique, ждикіи калий, KNO), որ հազւագիւտ մի բան չէ, խառնեցէք այն քիչ ջրի հետ և դրէք վերքի վրայ:»

Սողունների կծածի մասին:—Թէպէտ սողունների թոյնը քիմիապէս նման չէ կատաղած կենդանիների թքին, այնուամենայնիւ նա պակաս վնաս չէ հասցնում մարդուն:

Այս տեսակ թունաւորութեան ենթարկվում են գլխաւորապէս գիւղացիները, որոնց յաճախ կծում են օձեր և ուրիշ թունաւոր սողուններ:

Սկզբնական օգնութիւնը:—Նախ պինդ կապեցէք կծած անդամը վերքից վերև, ինչպէս վերոյիշեալ դէպքում: Առատ արիւն հոսեցրէք վերքից, շնչահան դրէք կամ ծծեցէք, չը վախէք ծծելուց, որովհետև ձեզ համար ոչ մի վտանգ չը կայ: Այրեցէք վերքը:»

Ես խորհուրդ կը տամ այն մարդկանց, որոնք առհասարակ ապրում են գիւղում, դաշտում և հետեւապէս յաճախ ենթարկվում զա-



նազան թունաւոր կենդանիների կծելուն, տանը կամ մինչև անգամ իրանց վրայ պատրաստի ունենալ մի փոքրիկ սրուակ լիքը *բարկկալաքար* (potasse caustique), որից մի քիչ խառնելով ջրի հետ, պէտքէ այրել վերքը այդ խառնուրդով:

*Միջատների խայթուածի մասին:*—Թուէնաւոր միջատների խայթուածը նոյնպէս յաճախ է պատահում և թէպէտ բարեբախտաբար միշտ վտանգաւոր չէ լինում, բայց յայտնի դէպքերում կարող է դժուարանալ:

Այդ կենդանիները վերք են հասցնում մի տեսակ սուր խայթոցով, որ նեղ խողովակով կապված է թունալի քսակաձև մասնի հետ: Յաւի պատճառը գլխաւորապէս այս թոյնն է լինում և ոչ խայթուածը:

Յաճախ միջատի խայթոցը պոկվում է նրա մարմնից և մնում մեր ոտտայնների մէջ: Միջատների թոյնն առհասարակ վտանգաւոր չէ, գոնէ մեր կողմերում. բայց կարող է պատահել, որ միջատը, խայթելուց առաջ արիւն է ծծել շարքօնով մեռած կենդանուց:

*Սկզբնական օգնութիւն:*—Հասարակ թու-

նաւոր խայթուածը պիտի շփել մի հեղուկով, որ պատրաստված է թունդ օղիից և մի քանի կաթիլ ամօնիակից (ammoniaque, ammiaкъ, NH<sub>3</sub>): Վիրաւորված տեղը զով պահեցէք, վրան սառչրի կօմպրէսներ դնելով: Եթէ խայթոցը վերքի մէջ է մնացել, նախ նրան պիտի հանել մի ասեղի օգնութեամբ և ոչ մատներով, որովհետև վերջին դէպքում կարող էք ջարդել թունալի մասնը, որ համարեա միշտ խայթոցի վրան է լինում, և այդպիսով կը թափէք թոյնը վերքի մէջ:

*Շարքօնային ուռոյցն* ունի իր յատուկ նշանները, որոնց կարելի է հեշտութեամբ ճանաչել:

Հիւանդն իրան շատ թոյլ է զգում, գլուխը ծանր է. կաշին չոր է և տաք. յաճախ նա ուշաթափ է լինում: Խայթված տեղի կաշին կարմրում, փայլում և ձգվում է և քոր գալիս: Յետոյվերքն ուռչում է և այդ ուռոյցքի շուրջն երևում են սև-սև փոքրիկ ուռոյցքներ, որոնք լցված են կարմիր հեղուկով:

Սուրդանակով խաչաձև կտրեցէք ուռոյցքը, մի քիչ էլ անցնելով վերքի սահմանը: Այրեցէք այս երկու կտրվածը կարմրացած երկաթով: Յետոյ վրան բարկկալաքար դրէք: Հիւանդին քիչ տաքացրած գինի կամ փունջ տուէք և սպասեցէք մինչև բժշկի գալը:



Առաջին դէպքում լինում է ճմլումն. երկրորդ դէպքում՝ խաղտուածք:

Գ Լ Ո Ւ Խ Զ.

ՃՄԼՈՒՄՆ ԵՆ ԽԱՂՏՈՒԱԾՔ

Մենք իմանում ենք, որ մկանները՝ շարժման գլխաւոր գործակալներն են և մարմնի հիմքը կազմում են ոսկորները, որոնց վրայ կպած են մկանները: Բայց որպէս զի շարժումն տեղի ունենայ, հարկաւոր է որ ոսկորները միմեանց մօտիկ լինելով, կարողանան շարժվել մէկը միւսի վրայ և այդպիսով յօդեր կազմեն: Դրա համար է, որ ոսկորների ծայրերը կոյր են և պատած աճաւով, որ հեշտացնում է յօդերի շարժմունքը: Յօդերը շրջապատած են կապանքներով, որոնք պաշտպանում և միմեանցից մօտիկ են պահում երկու ոսկորի ծայրերը: Այդ կապանքները դիմացկուն են և քիչ առաձգական: Ահա ինչերից է կազմված յօդը:

Արդ հասկանալի է, որ մի որ և է փորձանք՝ հարուածը, ընկնելը և այլն, կարող են կամ ջարդել և պատռտել այդ կապանքները, կամ թէ ոսկորների ծայրերը միմեանցից հեռացնել:

ճմլումն:—Այս դէպքում յօդի կապանքները չափազանց ձգվելուց երբեմն պատռտվում են, բայց ոսկորների մակերևոյթներն իրարից չեն հեռանում: Այստեղ յօդն ենթարկված է մի տեսակ ջարդուածի:

Սկզբնական օգնութիւնը:—Օգնեցէք կապանքների նորոգվելուն և դիմադրեցէք նրանց բորբոքվելուն: Աշխատեցէք շուտով վերականգնեցնել արիւնաշրջութիւնը նրանց շուրջը:

«Նախ՝ ստիպեցէք յօդին մի քանի թեթև շարժումներ անել, որ ոսկորների ծայրերը աւելի մօտենան միմեանց: Յետոյ մկանների երկարութեամբ շփեցէք յօդը:»

Այդպիսով դուք կը վերականգնեցնէք արիւնաշրջութիւնը, և եթէ քիչ թափված արիւն կայ, ծծվելով կանհետանայ:

«Կէս ժամ շարունակ վիրաւորված անդամը դրէք սառ ջրի մէջ, կամ թէ յօդի վրայ սառ կօմպրէսներ դրէք:

Յուրտը կարգելէ վերքի բորբոքվելուն, որ շատ վտանգաւոր է:

«Վերջապէս յօդին անշարժութեան մէջ պա-



հեցէք, թէ չէ կասկանքները կարող են աւելի պատուովել և մինչև անգամ ոսկորները տեղահան լինել (խաղտովել):»

Խաղտուածի մասին:—Այս դէպքում կասկանքներն այնպէս են պատուովում, որ ոսկորի գլուխը դուրս է գալիս յօդային խողովակից և միևս ոսկորի կողքին տեղաւորվում: Խաղտուածի առաջին նշանն է յօդի քակումն, իսկ երկրորդը՝ դուրս ընկած անդամի անկարողութիւնը մի շարժում գործելու:

Այստեղ շտապում եմ ձեզ յայտնել, որ դուք անկարող էք և չը պիտի փորձէք դուրս ընկած ոսկորն իր տեղը գցել: Որքան մինչև այժմ ձեզ խորհուրդ եմ տուել գործել և դարմանել, այնքան այս դէպքում խորհուրդ կը տամ ձեռք չը տալ հիւանդին:

Սկզբնական օգնութիւնը:—Դուք լաւ պիտի հասկանաք, որ խաղտուած յօդը վերանորոգելու համար հարկաւոր է նախ ճշդօրէն իմանալ վերաւորված տեղի անատոմեան: Այս դէպքում միայն բժիշկը պիտի օգնութիւն հասցնէ: Իսկ եթէ սկսէք ձեռք տալ վէրքին, գրանով դուք աւելի կը բարդացնէք գործը:

Բաւականացէք միայն նրանով, որ վնաս-

ված տեղի վրայ կը դնէք սառ կօմպրէսներ. բոլորովին անշարժ պահեցէք դուրս ընկած անդամը: Ամեն մի շարժումնք հիւանդին ցաւեր է պատճառում:

Գ Լ Ո Ի Խ Է.

ԿՈՏՐՈՒԱԾԻ ՄԱՍԻՆ

Ոսկորի մասին:— Ոսկորը, լինի նա երկար, կարճ կամ տափակ, կազմված է միևնոյն տարրերից, որոնք են.

1. Դրսի ոսկորածին թաղանթ, որի զերն է ոսկոր առաջացնել կամ թէ նորոգել կտարած ոսկորը:

2. Մի շարք մանրաթելեր, որոնք կազմում են ոսկորի ոստայնը: Այդ ոստայնը դրսի կողմից կարծր է, իսկ ներսի կողմից՝ սպունգանման.

3. Արնի անօթներ, որոնք կերակրում են ոսկորին:

4. Միջուկ կամ ուղեղ:

Ոսկորի կոտրվելը:—Երբ ոսկորը մի որևէ պատճառով կոտրված է, նրա կարծր մասը



փշրվում է և երկու կտորված ծայրերը տեղահան են լինում: Արդ, պէտք է իմանալ, որ բնութիւնը բարի մօր նման աշխատում է իսկոյն և եթ օգնութեան գալ:

Այստեղ ոսկրածին թաղանթն է գործ տեսնում: Բանը նրանումն է, որ պէտք է կտրած ոսկորի երկու ծայրերը միմեանց կպցնել: Բայց որ կպչելուց յետոյ ապագայում ոսկորն անյարմարութիւն և նեղութիւն չը պատճառէ հիւանդին, հարկաւոր է, որ նրա ծայրերն իրարու լաւ մօտեցրած լինին:

*Սկզբնական օգնութիւնը:*—Նախ՝ պիտի իմանալ, արդեօք ոսկորը կտրած է թէ ոչ: Եթէ ոսկորը կտրած է, վնասված անդամն անկարող է շարժում գործել, և երբ ոսկորը ձեռքով շարժում էք, կտրած տեղում լսելի է մի թեթև ճռճուոց:

Երբ համոզված էք, որ ոսկորը արդէն կտրած է, թո՛ղ երկու օգնականներ բռնեն կտրած անդամի ծայրերից և երկու հակառակ կողմերը քաշեն, իսկ դուք ձեր ձեռքը դրէք կտրած տեղի վրայ և ոսկորի ծայրերը միմեանց մօտեցրէք: Պարզ հասկանալու համար մի օրինակ վերցնենք: Իիցուք թէ կտրածը բազկոսկրն է, այսինքն

թևի այն մասը, որ գտնվում է ուսի և արմուկնի մէջ:

Մի օգնական պիտի պինդ բռնի վիրաւորվածի ուսը և կտրած ոսկորի վերևի մասը:

Մի ուրիշը, հիւանդի արմուկնը ծալելով պիտի ուժեղ կերպով քաշէ, առանց ցընցումների, ոսկորի ներքևի կտորը:

Այդպիսով ոսկորի երկու կտորված ծայրերը, որոնք իրար վրայ են նստած կամ թէ անբնական անկիւն են կազմած, կը դան ծայր ծայրի կը դիպչեն: Դուք էլ, ի հարկէ, ձեր ձեռքերը դնելով կտորուածի վրայ, կօգնէք այդ գործողութեան: Սրանից յետոյ թաց երիզով (շորի կտորներով) պինդ կը փաթաթէք վնասված տեղը և անդամը կը դնէք բարձի վրայ մինչև բըժշկի գալը:

*Կողերի կտրվելը:*—Կողերն երկար ու կեռ ոսկորներ են, որոնք ետևից կպչելով ողնաշարին՝ մի տեսակ վանդակ են կազմում, որի մէջ գտնվում են թոքերը: Կողերի կտրվելու դէպքում, նրանց կտրված մասերը տեղահան չեն լինում, որովհետև կողերի վրայ կպած փոքրիկ



մկանները թող չեն տալիս այդ: Բայց կտորների ծայրերը, որոնց մեր շնչառութիւնը մշտապէս շարժում է, կարող են վիրաւորել թոքերին. արդ՝ հարկաւոր է անշարժ պահել կողերը:

Սկզբնական օգնութիւնը:— Կրա համար մի մեծ շոր երեք ծալ արէք և դրանով շրջապատեցէք գօտիի նման վիրաւորվածի կուրծքը և ամուր կապեցէք:

Բայց դուք կասէք, թէ վիրաւորվածի կուրծք ամուր սեղմված լինելով, նա անկարող է շունչ քաշել:

Արդ՝ պէտք է իմանալ, որ թոքերի վանդակի կողքերը կազմված են կողերից, իսկ ներքևը մի մկանային յատակից, որին անվանում են *դիաֆրագմա*: Այս մկանը կարճանալով և լայնանալով, մի տեսակ փուքս է կազմում, որ թող է տալիս թոքերին ևս լայնանալ կամ կուչ գալ, նայած թէ օդը դրսից է մտնում, թէ դուրս է գալիս նրանից: Արդ, եթէ դուք կանգնացրել էք կամ փոքրացրել կողային շնչառութիւնը, հաւատացած եղէք, որ դիաֆրագմային շնչառութիւնը հիւանդին բաւականութիւն կը տայ: Կուրծքն այսպէս անշարժ մնալով, կտրած կողը ժամանակի ընթացքում կառողջանայ:

ԳԼՈՒԽ Ը.

Շնչառութեան ՄԱՍԻՆ.

Մարդ շնչասպառ է լինում այն ժամանակ, երբ նրա շնչառութիւնն այլևս կանոնաւոր չէ գործում. այսինքն երբ մի օտար առարկայ՝ ջուրը կամ թուրը, արգելք է լինում օդի թոքերի մէջ մտնելուն. մարդս խեղդվում է նմանապէս ապականված օդից: Օդն ապականվում է վառված ածխի, արտաքնոցի և այլն գազերից. Ուրեմն շնչասպառութիւնը երկու տեսակ է լինում:

- 1.) Երբ օդն անկարող է թոքերի մէջ մտնել, և՛
- 2.) Երբ օդը ապականված է:

Թողով խեղդուածի մասին:— Ես նկարագրելու չեմ խեղդուած մարդու զարհուրելի դէմքը: Զեր առաջ դուք տեսնում էք մի արարած, որի պարանոցի վրայ զեռ գտնվում



է այն թուր, որով նա խեղդվել է: Մի աշխատէք փնտռելու, թէ ինչու կամ ինչպէս է այդ պատահել: Որքան կարելի է շուտ ազատեցէք նրա պարանոցը սեղմող թուկից. իսկ եթէ նա կախ է ընկած, իսկոյն ևեթ *կտրեցէք* թուկը: Ահ, չը կարծէք, թէ ես մի միամիտ բան եմ ասում: Կան շատ մարդիկ, որոնք կախվածին երբէք չեն ազատում: Մի քանիսն էլ ոստիկանութիւնից են վախենում: Ուրիշները նախապաշարված լինելով, կարծում են թէ խեղդվածին ծեռք տալը մարդուս գլխին զանազան պատուհասներ է բերում: Եւ այդպիսով կախված մարդուն, որ յաճախ դեռ կենդանի է լինում, թողնում են մեռնելու:

*Սկզբնական օգնութիւնը:*— Սրդ՝ իսկոյն և եթ կտրեցէք կախված թուկը, առանց մըտածելու, թէ ինչ կասի պարոն ոստիկանապետը: Մերկացրէք նրա պարանոցը և կուրծքը: Մեկնեցէք նրան, գլուխը և իրանը բարձր դրած: Խիստ կերպով շփեցէք նրա սրունքները և մէջքը կոպիտ շորով, քացախով կամ օղիով: Օդ փչեցէք նրա կրծքի մէջ, կամ նրա բերանը ձեր բերանին դրած, կամ թէ փուքսով: Հէնց որ հիւանդը սկսեց մի քիչ շունչ քաշել, տաքացրէք նրան: Եւ եթէ նա կարող է կուլ տալ, տուէք նր-

րան մի քանի գդալ տաքացրած գինի, թէյ կամ սուրճ:

*Ջրի մէջ խեղդուածի մասին:*— Այս փորձանքը շատ յաճախ է պատահում: Լինի դա կամաւոր, կամ անզգուշութեան հետեանք, միւնոյն է, այս տեսակմահվան դէպքերն սուաջին տեղն են բռնում: Իրա համար ձեզանից ամեն մէկը պիտի իմանայ, թէ ինչպէս գործելու է այս դէպքում: Շատ-շատերը մինչև անգամ տարրական հասկացողութիւն չունեն դրա մասին:

Առհասարակ կարծում են, թէ մարդ խեղդվում է մեծ քանակութեամբ ջուր կուլ տալուց: Շատ մարդիկ համոզված են, թէ ջուրը և օդը, որոնք մեր մարմնի մէջ մտնում են բերանով, զնում են մի և նոյն տեղը: Իմացած եղէք, որ այդ բոլորովին սխալ հասկացողութիւն է: Բերանը չընայելով թէ ստամոքսի և թէ թոքերի համար ընդհանուր մի անցք է, բայց շնչափողի վերևի ծայրի մօտ երկու անցքեր կան, որոնցից երբ մէկը գործում է, միւսը ծածկվում է. թէ ինչպէս է այդ կատարվում, այստեղ ժամանակ չէ բացատրելու:

Վերոյիշեալ սխալ հասկացողութեան հետեանքն այն է լինում, որ խեղդվածին տուած առաջին օգնութեամբ աշխատում են կուլ տուած ջուրը դուրս թափել տալ: Այս դէպքում խեղ-



դվածին կախ են տալիս ոտերից և բռունցքներով մէջքին խփում: (\*) Այդպիսով խեղճ հիւանդի վերջին շունչն էլ փչել են տալիս:

Սկզբնական օգնութիւնը:—Ահա թէ ինչ պէտք է անել որքան կարելի է շուտ:

«Պառկեցրէք խեղդուածին մէջքի վրայ, ոտերը մի բանի դէմ տուած: Դրէք նրա ուսերի տակ մի մեծ առարկայ՝ փաթած շորեր, մեծ քար, փայտ, ինչ որ ձեռքներդ ընկնի: Նա չէ շնչում: Պէտք է ստիպել շնչելու: Դրա համար նրա կրծքին պիտի տալ փուքսի շարժումները: Բայց ինչպէս անել այդ:

Ահա թէ ինչպէս.

«Չօքեցէք խեղդվածի ետև. ձեռքերով բռնեցէք նրա երկու արմունկերը և ուժեղ կերպով բարձրացրէք նրա թևերը: Այդ շարժումներով դուք կը լայնացնէք նրա կուրծքը, և թոքերին կը ստիպէք մեքենայաբար ներաշնչողութիւն գործել: Յանկարծակի ցածացրէք նրա թևերը և մօտեցրէք կրծքին: Այդպիսով դուք փոքրացնում էք կրծքի պարունակութիւնը և ստիպում էք

(1) Իսկ մեզ մօտ խեղդուածին փորի վրայով դցում են մի մեծ քարի կամ փայտի վրայ:

նրան մեքենայաբար աշտաշնչել: Անընդհատ շարունակեցէք այդ երկու տեսակ շարժումները առանց վհատվելու: Մինչդեռ դուք դրանով էք զբաղված, թող մի ուրիշը նրա ներքին անդամները շփէ: Նայեցէք որ հիւանդի բերանը ծածկված չը լինի: Լեզուն բերանից դուրս հանեցէք և այդպէս պահեցէք:

«Սմենից կարևորն այն է, որ դուք յոյսներդ չը կտրէք: Յաճախ պատահում է ազատել այնպիսիներին, որոնց արդէն մեռած են կարծում:

«Հէնց որ հիւանդը սկսեց շնչել, դադարեցրէք նրա թևերի շարժումները և շտապեցէք ամեն կերպ նրան տաքացնել:

«Միայն այդ ժամանակ պիտի թափել տալ կուլ տուած ջուրը: Համարեա միշտ հիւանդը նողկանք է գործում, բայց թող լինելով, պէտք է նրան օգնել փսխելու: Դրա համար մի փետուրով խողտեցէք (ղլբի տուէք) նրա կոկորդը, որ փսխեցնելու ամենահեշտ միջոցն է: Երբ հիւանդը բաւական ջուր է թափել, տուէք նրան կազդուրիչ տաք բան խմելու, ծածկեցէք մարմինը տաք շորերով և թողէք որ քնի:»

Այս բոլորը, ինչպէս տեսնում էք, շատ հա-



սարակ բաներ են, և մի մեծ յիշողութիւն էլ չէ հարկաւոր, որ մարդ կարող լինի միշտ մըաքին պահել:



ՆԵՆՍՎԱԾ ՕՂԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՇՆՉԱՍՊԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Սկզբնական օգնութիւնը: — Շտապեցէք շնչասպառ եղածին դուրս բերել և զնել մաքուր օդի մէջ: Նրա՛շորերը հանեցէք: Թո՛ղ գլուխը բարձր դրած լինի, և ոչինչ չարգելէ նրա շնչառութիւնը: Խոզանակով կամ կոշտ շորով շփեցէք նրա ամբողջ մարմինը, առաւելևս ոտերը, սրունքները, ձեռքերը, թևերը, այնպէս որ արագացնելով արիւնաշրջութիւնը, նրան կարելի լինի տաքացնել: Երեսի վրայ սառ ջուր սրակեցէք: Վերոյիշեալ բոլոր միջոցները գործ դրէք նրա շնչառութիւնը վերականգնեցնելու համար: Փետուրով խտրեցէք նրա կոկորդը, որ կարողանայ փսխել: Քացախ տուէք նրան հոտոտելու: Շէնց որ հիւանդը կուլ տալ կարողացաւ տուէք նրան խմելու մի մեծ բաժակ սառ.

ջուր, մէջը քիչ քացախ ածած: Այս վերջինը չը մոռանաք, կարևոր է: Սրանից յետոյ, տաքացրէք հիւանդին և պառկացրէք քնելու:»

ԳԼՈՒԽ Թ.

ԹՈՒՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թէ ինչ աւերմունք են գոյացնում թոյները:—Թոյները նախ մարսողական խողովակի վրայ են ներդործում ու յետոյ արիւնաշրջութեան և նեարդների վրայ: Արդ, դուք պիտի միջամտէք այն ժամանակ, երբ թոյնը դեռ գտնվում է ստամոքսի կամ աղիքի մէջ: Սրանով ուզում եմ ասել, որ հարկաւոր է շտապով գործել:

Թունաւորվածն իրան վատ է զգում. փորը ծակծկում է. նողկանք ունի և աշխատում է փսխել: Եթէ այդ մի ուրիշ հիւանդութիւնից չէ, պիտի կասկածել, որ նա թունաւորված է: Աշխատեցէք իմանալ, ինչ թոյն կամ ինչ մի ուրիշ նիւթ է գործ ածած: Այդ իմանալուցն է կախված օգնութեան եղանակը. իսկ այդ օգնութիւնը զանազան է, նայած թոյնի տեսակին: Յաճախ թունաւորութիւնն առաջ է գալիս



կերակուրներից (սոււնկերից), կամ խոհանոցի ամաններից (պղնձից, կապարից):

Քիչ չէ պատահում, որ մեծ քանակութեամբ դեղ ընդունելիս թունաւորվում են: Ամենօրեայ գործածական դեղերն էլ են յաճախ թունաւորում, ինչպէս՝ լաուզանում <sup>1)</sup>, ափիոն <sup>2)</sup>, շիկատակ <sup>3)</sup>, խարուբուկ <sup>4)</sup>, մատնունի <sup>5)</sup>, դառը դըրում <sup>6)</sup>, ծնծաղիկ <sup>7)</sup>, խարանաղեղ <sup>8)</sup>, իօդ, քլօր, ֆօսֆօր, ամօնիակ, մկնդեղ, մնդիկ, ծծմբային թթուատ և այլն:

1) Լաուզանումը հեղուկ դեղ է, որի մէջ ափիօնը խառնված է գանազան նիւթերի հետ (զաֆրանի, դարիչինի, միխակի և այլն հետ):

2) Ափիոնը (օպիում) դանազան տեսակ խաչխաչների հիւթն է. քնեցնող յատկութիւն ունի:

3) Չիկատակը (belladone, сонная одурь) թունաւոր բոյս է, որի տերևներն են գլխաւորապէս գործածում, այս բոյսից հանում են ատրոպին կոչված դեղը:

4) խարուբուկը (datuna, дурманъ) բոյս է, որի տերևը և սերմն են գործածում:

5) Մատնունին (digitale, наперстянка) խոտաբոյս է, որի ծաղիկները մատի ձև ունին: Տերևն է գործածվում:

6) Դառը դըրում (coloquinte) խոտաբոյս է, ունի նարնջի մեծութեամբ դեղնաւուն պտուղ, որը և գործ են ածում:

7) Ծնծաղիկը (խլօպուղ, խնջլօղ, colchidue) խոտաբոյս է, որի փչեչը (bulbe, луковица) և սերմն են գործածում:

8) խարանաղեղ (cantharide, шпанская муха, Աստուծոյ եզնակ) կանաչ, ոսկեգոյն միջատ է, որի գործօն նիւթն է կանթարիդին: Մ. Թ.

Սկզբնական օգնութիւնը:—Առանց ուշացնելու դուք երեք գործ պիտի կատարէք:

«Նախ դատարկեցէք թունաւորվածի ստամոքսը, ամեն կերպ ստիպելով նրան փսխելու: Դրանով ստամոքսի մէջ մնացած թոյնը դուրս կը թափվի: Հետեւապէս պիտի գործածել փսխեցուցիչ դեղեր, 1):

Ամենքին խորհուրդ եմ տալիս, միշտ պատրաստի ունենալ փսխեցուցիչ դեղ, որ շատ դէպքերում օգուտ է տալիս, և դուք ժամանակ չէք կորցնիլ վազելով դեղատանից բերելու: Բայց կարող է պատահել, և ես համոզված եմ, որ ձեր ձեռքի տակ ոչ մի փսխեցուցիչ դեղ չը կայ:

«Այս դէպքում, խիստ խողտեցէք հիւանդի կողորդը, մինչև կը փսխի»:

Բաւական փսխելուց յետոյ, հիւանդի ստամոքսն ազատված է թոյնի մեծ բաժնից. մնացածը պէտք է չէզոքացնել: Եթէ ձեռքի տակ դեղթափ ունէք, տուէք նրան. բայց, իմանում

1) Օրինակ անտիմօնխառը գինեքար (tartre stibié; C. N<sup>o</sup> SBO) որը թափանցիկ բիւրեղ է: Դրանից 20 սանտիգրամ խառնելով մի չիչ ջրի մէջ, լի բաժակներով այդ հեղուկից խմեցնել հիւանդին մինչև փսխելու:

Մ. Թ.



եմ, որ չունէք և կամ թէ ունէք՝ գործածելը չէք իմանում:

«Այդ դէպքում մեծ քանակութեամբ հեղուկ տուէք խմելու, գլխաւորապէս արբիւմինային հեղուկ, որ այսպէս ասած, շրջապատում է թոյնը, և նրան խանգարում է ստամոքսի պատերին կալցելու:

«Ալքիւմինային հեղուկն այսպէս պէտքէ պատրաստել՝ վեց ձուի սպիտակուցը խառնել և հարել մի շիշ ջրի մէջ:


«Այս դէպքում կաթն էլ է լաւ ներգործում:—Նմանապէս գործադրեցէք օսլայախառն ջուր՝ մի գդալ հասարակ օսլայ (amidon, крахмалъ) մի շիշ ջրի մէջ եռացնելով:»

«Մինչև այժմ դուք թոյնի դէմ կռվել էք միայն ստամոքսի մէջ: Բայց կարող է պատահել, որ թունաւորվածին ուշ են օգնութեան եկել, և թոյնն անցել է աղիքների մէջ, ուր դեղթափը և չէզոքացնող նիւթերն այլևս անկարող են ներգործել: Այժմ պիտի լուծողական տալ: Բայց դուք կասէք, թէ դժուար է ամեն տեղ լուծողական գտնել: Սխալվում էք, սիրելի ընթերցողներ, միշտ և ամենուրեք կարող էք գտնել: Ասածս խոհանոցի աղն է: Երկու սեղանի

գդալ աղ հալեցրէք կէս շիշ ջրի մէջ: Տուէք այս անախորժ, բայց օգտակար խմիչքը թունաւորվածին ընդունելու բերանով կամ ներքեով:

«Երբ թունաւորութեան առաջին նշանները մեղմացած են, տուէք հիւանդին տաքացրած գինի, կամ թէյ, որոնք քրտինք կը բերեն. արովհետև քրտինքն էլ է թոյնը դուրս բերում:»

Յարմարութեան համար ես առանձին գրում եմ գործածական թոյների և այդ թոյների դեղթափների անուանները:





ԴԵՂԹԱՓՆԵՐ

Սուսկերի, Շիկատակի, Խարուբուկի,

Մատնունիի ղէմ:

1. Փսխեցուցիչ դեղ (20 սանտիգրամ մի շիշ ջրի մէջ):—Իպէկակուանհա 1): —Կատկի խողտումն:
2. Գենագերչակի իւղ (լուծողական է):—Ա. դալի ջուր:—Կաթ:
3. Սև սուրճ: Տաքացրած գինի:—Շաքարի վրայ կաթեցրած եթեր:

Ափիոնի, Լաուդանումի, Մորֆինի<sup>2)</sup> ղէմ:

1. Փսխեցուցիչ դեղ:—Իպէկակուանհա:—Կատկի խողտումն:
2. Սև սուրճ:—Քացախախառն ջուր (2 գդալ 1 շիշ ջրի մէջ):
3. Լիմօնի լիմօնադ:—Չը թողնել քնելու: Պղնձի, սնդիկի ղէմ:

1. Մեծ քանակութեամբ տաքաւուն ջուր:
2. Ալբիւմինային ջուր. (6 ձուի սպիտակուցը մի շիշ ջրի մէջ):
3. Կաթ:

Կապարի, Իողի, քլորի, ծծմբային թթուատի ղէմ:

1) Բոյս է, որի արմատում պարունակվում է էմէտին:

2) Մորֆինը պարունակվում է ափիոնի մէջ: Համազատացնող յատկութիւն ունի: Ծ. Թ.

1. Փսխեցուցիչ դեղ:—Իպէկակուանհա:—Կատկի խողտումն:
2. Ալբիւմինային ջուր:—Օսլայախառն ջուր (1 գդալ եռացնել 1 շիշ ջրի մէջ):
3. Սապնաջուր (15 գրամ սապոն 2 շիշ ջրի մէջ):—Կաթ:
4. Խոհանոցի աղ:

Ամօնեակի, ճնճաղիկի, դառը դղումի, խարանաղեղի ղէմ:

1. Ոչ փսխեցուցիչ դեղ:—Կատկի խողտումն. Մեծ քանակութեամբ տաքաւուն ջուր:
2. Քացախախառն ջուր:—Լիմօնի լիմօնադ:
3. Ալբիւմինային ջուր:—Կաթ:
4. Տաքացրած գինի:—Շաքարի վրայ կաթացրած եթեր:

Փոսֆորի ղէմ

1. Կատկի խողտումն:— Ալբիւմինային ջուր: Օսլայախառն ջուր: Մկնաղետի ղէմ:
1. Փսխեցուցիչ դեղ:— Իպէկակուանհա: — Կատկի խողտումն:
2. Մաղնէզի:—Ալբիւմինային ջուր:—Կաթ:
3. Լուծողական իւղ:

Վ Ե Ր Զ.





երես

Ներածութիւն . . . . .	3:
Արնի համախոնութեան մասին . . . . .	11.
Արինաւորութեան մասին . . . . .	13.
Կաթուածի մասին . . . . .	19.
Մկանաձգութեան մասին . . . . .	25.
Երեխաների մկանաձգութեան մասին	30.
Արինահոտութեան մասին . . . . .	33.
Արինաթրութեան մասին . . . . .	37.
Զարդուածի մասին . . . . .	39.
Վէրքերի մասին . . . . .	46.
Հրագէնի պատճառած վէրքերի մասին	51.
Այրուածի մասին . . . . .	54.
Յրտահարի մասին . . . . .	48.
Ջրվախութեան մասին . . . . .	57.
Սողունների կծածի մասին . . . . .	60.
Միջատների խայթուածի մասին . . . . .	63.
Շարքօնային ուռոյցք . . . . .	64.
Ճմլումս . . . . .	66.
Խաղտումս . . . . .	68.
Կոտրուածի մասին . . . . .	69.
Կողերի կոտրվելը . . . . .	71.
Թոկով խեղդուածի մասին . . . . .	73.
Ջրի մէջ խեղդուածի մասին . . . . .	75.
Նեխված օղի պատճառած շնչասպա-	
հութեան մասին . . . . .	78.
Թունաւորութեան մասին . . . . .	79.
Դեղծափներ . . . . .	84.

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՋԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳԸՐ-  
ԲԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ խմբագրական մաս-  
նաժողովը սրանով յայտարարում է, որ տպա-  
գրութեան համար ընդունվում են հետևեալ  
բովանդակութեան ինքնուրոյն և թարգմանա-  
կան գրուածքները.

1. Գեղարուեստական:

2. Գիտնական. զուտ գիտնական գը-  
րուածքներից կրտսյազրուին միայն այնպիսի-  
ները, որոնք վերաբերում են Հայոց կեանքի  
հետազօտութեան, իսկ գիտութեան միւս ճիւղ-  
երից միայն ժողովրդականացրած գրքեր:

3. Գասագրքեր, նամանաւանդ ընդհա-  
նուր գրականութեան, ընդհանուր պատմու-  
թեան, Հայոց գրականութեան, բնական պատ  
մութեան և Փիզիքայի ձեռնարկներ՝ կազմած  
մեր թեմական դպրոցների համար:

4. Մանկական ընթերցանութեան հա-  
մար:

5. Նիւթեր մեր ժողովրդի կեանքի ու-  
սումնասիրութեան վերաբերեալ (աւանդու-  
թիւններ, երգեր, սովորութիւններ և այլն):



II

Ծանօթութիւն. — Մանրամասն ծրագիր վերոյիշեալ նիւթերի ժողովելու համար կըտըպագրուի յետոյ: Ընկերութեանս խմբ. մասնաժողովը իրան է վերապահում ներկայացրած նիւթերից ընտրութիւն և քաղուածք անել, եթէ ուղարկողը նախօրօք որոշ պայմաններ չէ դնում:

Տպագրուած գրքերի համար վարձատրութիւն տրվում է մի տպագրական թերթին՝ ինքնուրոյն գրուածքների համար՝ 20—25 ռ., իսկ թարգմանական գրուածքի համար՝ 15—20 ռուբլի:

Բացառիկ դէպքերում վարձատրութիւնը կարող է աւելի լինել խմբ. մասնաժողովի հայեցողութեամբ:

Հասցէն՝ Тифлисъ, Правленію Тифлискаго Общества изданія армянскихъ книгъ.



15. Ազաթանդեղայ պատմութիւն . . . . .	1 —
16. Գիւղական խալիֆայ. Ա. Արարատեանցի . . . . .	50 —
7. Վանայ Սագ. Գ. Շէրինցի . . . . .	75 —
18. Փնջիկ. գրեց Աղէքսանդր Արարատեանց . . . . .	20 —
19. Նամուս. վէպ. գրեց Շիրվանզադէ . . . . .	1 —
20. Ստեփ. Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական. երկ. տպ . . . . .	2 —
21. Թիֆլիզեցւոց մտաւոր կեանքը Գ. Տէր-Աղէքսանդրեանի . . . . .	1 50
Նոյնը ընտիր թղթի վրայ . . . . .	2 50
22. Ղևոնդ պատմագիր . . . . .	2 —
23. Արբազան պատմ. հին ուխտի. Սահակ քնն. Սահակեանի . . . . .	30 —
24. Նոյնը ուսուցիչների համար . . . . .	1 75
25. Սոկրատէս. թարգ. օր. Թեկղի Ստեփոյեան . . . . .	10 —
26 Հ. Պատմութիւն Հայոց. Ս. Պարսապեանի . . . . .	1 50
27. Ուղեցոյց գործն. չերամապահութեան. Կ. Մելիք-Շահնազարեանցի . . . . .	40 —
28. Ժամանակագրութիւն հայոց Յ. Դարդեկի . . . . .	1 25
29. Վարդ-Ռէչպի. Ե. Սպիրի. թարգ. Ի. Յ. . . . .	10 —
30. Նալ և Իամայեանթի. Ֆ. Շմիրտի. թարգ. Յ. Լալայեանց . . . . .	20 —
31. Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը. Կոմս Տոլստոյի թարգ. Մ. Ա. . . . .	7 —
33. Հաւատարիմ Սալիտրին. Վայրենէր. թարգ. Փ. Վարդանեան. . . . .	10 —
33. Լինճարգ և Գերտրուդ. Հենրիխ Պետտալոցցի. թարգ . . . . .	25 —
34. Յաւելուած ի գիրս պատմութեան Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողիկ կոչեցելոյ. Նորայր Բիւզանդացի. . . . .	20 —
35. Նաւի փոքրաւորը. Մ. Ռոզենհայնի. թարգ. Յ. Լալայեան. . . . .	15 —
36. Ուռնեց Յովսէփ, Ե. Սպիրի. թարգ. Ի. Յ. . . . .	15 —
37. Մեծապատիւ մուրացկանները. Յ. Պարոնեանի. . . . .	40 —
38 Մզղային ջոջեր. Յ. Պարոնեանի . . . . .	1 —
39 Բը-ա-բա, Է. Օժէկոյի . . . . .	15 —
40 Շնիկ, Կուլիկովայի . . . . .	5 —



41	Շչեղրինի երեք գրոյցներ . . . . .	— 10
42	Տարասկոնցի Տարտարէնը . . . . .	— 40
43	Օրլէանի կոյս, Օստրոգորսկու . . . . .	— 25
44	Արարատնու կեանքը . . . . .	— 75
45	Իազափարական քահանայ, Պօտապկենկոյի . . . . .	— 75
46	Ընտանիքի յոյսը, Անաննակայի, Թարգմ. օր. Վ. Տէր-Յովսէփեանի . . . . .	— 10
47	Հոսնոսի ձեռատետրը Յ. Պարոնեանի. . . . .	1 —
48	Քիմրա Բօսկոյի, Թարգմ. Ա. Մելիք-Ալլահ- վերդեան . . . . .	— 40
49	Շչեղրինի երեք վէպիկ, Թարգմ. Մ. Ղազարեանց . . . . .	— 15
50	Սասմայ ծոեր, Գարեգին սարկաւազի . . . . .	— 50
51	Ջաւախքի բուրմունք, Ն. Լալայեանցի . . . . .	— 25
52	Մտաւոր, բարոյական, ֆիզիքական կրթու- թիւն, Սպենսերի. Թարգ. Մ. Ղ. . . . .	— 1.
53	Մըռռան, Օ. Ի. Շմիտզ. Թարգ. Ա. Քալանթար. . . . .	— 20
54	Խան-Միրան, գրեց Սէյլան . . . . .	— 20
55	Տարաս Բուբլա, Գոգոլի, Թարգ. Մ. Արեղեան . . . . .	— 40
56.	Փչրանքներ, Կ. սարկ. Յովսէփեան (մամուլի տակ) . . . . .	— —
57.	Երկու քոյր, Ղ. Աղայեանցի. . . . .	— 25.
58.	Իրախտի բնտանիք, գրեց Խրիմեան Հայրիկ. . . . .	— 60.
59.	Սիրաք և Սամուէլ, գրեց Խրիմեան Հայրիկ . . . . .	— 50.
60.	Բառվ Բրօքէր. Փորձանքների բժշկարան. Թարգ. Քրանս. Ք. Օհանեան . . . . .	— 20

Նոյն տեղում վաճառվում են նաեւ Ընկ-ե  
րութեան հետեւեալ գրքերը.

1	Ուսումնարանների առողջապահութեան հարցեր, բժ. Ա. Բաբայեանի . . . . .	1 —
2	Կրքեր և նոցա ազգեցութիւնը առողջութեան վրայ, բժ. Ա. Բաբայեանի . . . . .	— 30
3	Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի . . . . .	2 —

դ. ի նն է 20 կոպ.



438

2013

« Ազգային գրադարան



NL0070802



